



ՄԽԻԹԱՐԱՅ ԱՐԲԱՅՅՐ 1737

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ

ՄԽԻԹԱՐԱՅ ՄԵԾԻ ԱՐԲԱՅՅԻ

Ա.Զ.Դ.

Մխիթար Արբախոր սրբափայլ կեանքն առաջին անգամ հանրութեան ծանօթացուցած է Գերապ. Ստեփ. Գիւլէր Ազունց, Պատմութիւն կենաց եւ վարուց Տեառն Մխիթարայ Սեբաստացոյ Բարունապետի եւ Արբայի, Վենետիկ 1810: Հեղինակը իր աղբիւրներու մասին կը հաղորդէ (էջ Գ—ԺԴ). «Յատիկ 1810: Հեղինակը իր աղբիւրներու մասին կը հաղորդէ (էջ Գ—ԺԴ). «Յատուցընթաց մեզ ի պատմագրութեան վարուց գերյարգոյ հօրս մերոյ Մխիթարայ՝ եղեւ հայր Մատթէոս վարդապետն Երզնկացի. այր աստուածարեալ, հրեշտակ ի մարմնի, եւ լի ամենայն հրահանգիւ աստուածայնոց եւ մարդկային իմաստից. մի յառաջնոց նախապատիւ աշակերտաց նորա. միանգամայն եւ խորհրդական նախն, եւ ատենադպիր...: Սա՛ գոր ինչ լուսա ի բերանոյ նորուն իսկ Մխիթարայ, եւ ի հասակակից ընկերաց նորա, որք ի սկզբանէ վկայեալ հաւատարիմ արանց ոմանց, զամենայն բազում երկիրաժողովրդեաց եւ հաւաստի ստուգութեամբ ի գիր արձանագոյց: Որ եւ բաց յառանձին Պատմագրութեան վարուց նորա, գրեաց եւ զՅիսնամեան ժամանակագրութիւն Միաբանութեանս նոյն եւ առատ բանիւ մինչեւ ցրնտութիւն յաջորդ սրբային»:

Հ. Մատթէոս վ. ի ոչ Մխիթարի վարքն եւ ոչ ալ 50ամեայ ժամանակագրութիւնը տպուած է իր իսկութեան մէջ:

Այդ երկու գրութիւններու վրայ յեցած է «Համատուութիւնն վարուց Մխիթարայ», գոր անանուն Մխիթարեան մը կազմած է, հաւանօրէն 1750էն ոչ շատ վերջը: Ան ունեցած է իր տրամադրութեան տակ կարգ մը վաւերագիրներ ալ, որոնք Հ. Մատթէոսի անձանօր մնացած կ'երեւան: Այսպէս ստիւն եւ ոչ ալ յաջորդ կենսագիրներուն հոյ, եւ ոչ իսկ Նուրիխանի բնական գործին մէջ: Այս Համատուութեանն ունինք վիեճակ երկու օրինակ, մին Մխիթարեան Դիւանին մէջ եւ երկրորդը Մատենադարանի ձեռագրաց շարքին (Թ. 494, տես Տաշեան, Ցուցակ, էջ 965): Այս երկու ձեռագիրներէն նախնականը կ'երեւայ Թ. 494 ձեռագիրը (A). երկրորդը (B) ասկէ, կամ ասոր գաղափար օրինակէն ծագած ըլլալու է. ունի մանր շեղումներ առաջինէն: Թէ Թ. 494 ի՞նչ գաղափար օրինակ ունեցած է, չենք կարող ստուգել: Կան հոն դատարկ բողբուսներ եւ տողեր, որոնք կ'ենթադրեն լրացուելու

Հանդ. Ամս. 1949, Թ. 4—12:

պէտք, անշուշտ Հ. Մատթէոսի վարժէն կամ ժամանակագրութենէն: Ե օրինակը անտեսած է այս դատարկ բողոսած տեղիքները:

Բնագիրը վերակազմուած է A (Թ. 494) եւ B (Բ. օրինակ) ձեռագիրներու համեմատութեամբ: Անոնք կ'երեւցնէին ուղղագրական խոտորումներ. արհիեպիսկոպոս, արքեպիսկոպոս. արայհայր, արբահայր. Կ. Պօլիս, Կ. Պոլիս, նոյնպէս յ գրի յաւելում եւ անկում, բառերու ետեւադրութիւններ. կարեւոր տարբերութիւնները նշանակած ենք ծանօթութիւններու մէջ: Բնագրին մէջ ստորաբաժանումները մեզմէ են:

Գրուածքս կը հրատարակենք իբրեւ պատմական Յիշատակարան՝ իր ամբողջութեան մէջ: Կան հոն ակնարկութիւններ ժամանակի տխուր դէպքերու եւ դէմքերու մասին: Պատմութեան կը վերաբերին անոնք: Եթէ դէպքերը չենք կրնար արդարացնել, չենք կրնար նաեւ պատմագիրը մեղադրել, որ տեսածը կամ լսածը գրի առած է:

Թ. 494 ձեռագրին սկիզբը կը գտնուի Միսիքարի պատկերն, որուն արտատպութիւնը կը ներկայացնենք Բնագրիս հրատարակութեան հետ: Պատկերս կը կրէ ստորագրութիւնը Fr(ancisc)us Zucchi, որ գծագրիչ եւ փորագրիչ էր, հռչակաւոր ինչպէս իր տոհմին միւս անդամները: Սա ծնած է 1692ին, վենետիկ եւ վախճանած նոյն քաղաքին մէջ 13 հոկտեմբեր 1764: Մասնաւոր հրատարակի մը վրայ 1750ին մեկնած է Գերմանիա Դրեսդենի պատկերասրահին համար աշխատելու եւ միայն եօթնամեայ պատերազմին հետեւանալով ընդհատած եւ վերադարձած է հայրենիք, իսկ ըստ Fäußliի առանց անձամբ Գերմանիա գտնուելու աշխատած է վենետիկ Դրեսդենի համար. տե՛ս G. K. Nagler, Neues allgemeines Künstler-Lexikon, Վիեննա, 1924, հատոր 1-ին. էջ 352, եւ Ul. Thieme—Felix Becker, Allgemeines Lexikon der bildenden Künstler von der Antike bis zur Gegenwart, herausgegeben von Hans Vollmer, Լայպցիգ 1947, հատոր 1, էջ 578: Յիսնական բուականէն յառաջ, ապահովաբար 1737ին փորագրած ըլլալու է Միսիքարի պատկերն, ինչպէս կը վկայէ «Համառօտութիւնը» յամն 1737. «Ի ս ե պ տ. 15 ն կ ար ե ց աւ կ ե ն դ ա ն ա գ ի ր պ ա տկ ե ր ն ո ր ա»: Այս կենդանագիր պատկերն, որ, ինչպէս կը կարծենք, պահած է մեզի Թ. 494 ձեռագիրը, կը ներկայանայ ամենահարազատը Միսիքարի ծանօթ նկարներուն մէջ:

Հ. ՎԱՀԱՆ ԻՆՊՈԻԶՆԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՒՑ ԺԳՆԱՌՈՐԱՅՆ ՀՈՅՈՑ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՍԻ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ ԺԳՆԱՍԵՐ ԿՈՒՍՆԱՅՆ ՄԱՆԱՍԵՒ ԵՒ ՄԱՐԿԱՐԱՅՈՒ, Ի ԿԱՏԱՐԵԱԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ ՄԻՒԹԱՐԱՅ ՄԵԺԻ ԱՐԲԱՅԻՆ՝

Յամի Տեառն 1646, թուական Հայոց ՌՂԵ. ի դաւառին Կապադոզիայի, ի բարեչէն քաղաքի, որ յայլազգեաց բարբառա Շիպին Ղարահիսար անուանի, անուն երկրուն էր Ալեքսիանոս եւ կրտսերոյն Յովհաննէս: Սոքա յորժամ յարբունա հասին՝ զնացին յանապատն Լիմայ. եւ յետ կալոյ անդ ժամանակ ինչ՝ զնացին յայլ դաւառ, եւ ընտելեցան ի քարանձաւ մի: Եւ յետ ամաց բազմաց անցանելոյ, ի վախճանիլ հօր իւրեանց՝ առեալ զմայր իւրեանց զնացին ի Սերաստիա եւ ի տան միում յանքոյթ կողման օթեւանս կալան: Զորս միանդամ Մեղիսէթ եպիսկոպոսն, առաջնորդն Սերաստիոյ, ի դաս քարչեաց ի մէջ եկեղեցւոյ, զոր նոքա յօժարութեամբ եւ ցնծութեամբ յանձն առին:

1676. Ծնաւ մանուկն Միսիքար, զորմէ զբեցուց ստորեւ:
1681. Էին ի Սերաստիա երկու օրիորդք երկիւղածք Սասունոյ, որք առ մօրն իւրեանց կային: Անուն երկրուն էր Մանասէ, իսկ կրտսերոյն Մարիամ: Հայր նոցա վախճանեալ էր. եւ երկու եղբարք նոցա հրաժարեալ յաշխարհէ՝ հետեւեալ էին յանապատն Լիմայ ի ծառայել Գրիստոսի կրօնաւորական վարուք զամենայն աւուրս կենաց իւրեանց: Մին ի նոցանէ էր քահանայ, միւսն պարզ միայնակեաց: Իսկ Մարիամ նշանեալ էր առն: Արդ սոքա երկոքին քորք եւ մայր նոցա եւս հետեւեցան երկուց ճշնաւորացն Ալեքսիանայ, միւսն պարզ միայնակեաց: Իսկ Մարիամ նշանեալ էր առն: Արդ սոքա երկոքին քորք եւ մայր նոցա եւս հետեւեցան երկուց ճշնաւորացն Ալեքսիանայ, միւսն պարզ միայնակեաց: Իսկ Մարիամ նշանեալ էր առն: Արդ սոքա վանահայր իսկ էր նոցա, Տէր Յարութիւն անուանեալ, երթայր ի տունս նոցա եւս յուսուցանէր զնոսս մինչեւ բարեք վարժեցան: Միանգամայն եւ երկու ճշնաւորքն երթային ի տունս նոցա եւ իրատէին եւ կրթէին ի հոգեւոր վարս: Եւ ի սմին ժամանակի երթայր ի տունս յայն եւ մանուկն Միսիքար եւ օժանդակ լինէր նոցա առ ուսումն զրոց:
1685 ամառ: Երկու եղբարք ճշնաւորքն հանդեան ի Գրիստոս ի Սերաստիա, թէպէտ փոքր ինչ յառաջ եղև վախճան միոյն ի նոցանէ: Եւ թաղեցան ի հասարակաց դամբարանոցն քրիստոնէից ի նշանաւոր տեղոջ հանդիսիւ մեծաւ:

Իբրև եօթն ամք եղին նախաճառեալ խաչակիր վարուց օրրանեալ կուսանացն Մանասէի եւ Մարիամու, անկան ի զժուարակիր հիւանդութիւն ինչ մարմնոյ. քանզի ի ցրտութենէ ժամանակին եւ զաւառին տկարացան ծուռիք նոցա, եւ այնուհետեւ իբրև ամ մի ցպով եւ օգնականութեամբ այլոց կարէին յոտն կալ եւ զնալ յեկեղեցին: Իսկ յետ ամին այնորիկ առաւել զօրացեալ տկարութեան նոցա՝ անդամալոյժ եղին եւ անկան ի մահիճս, եւ աշակերտուհիքն նոցա եւ այլք սպասաւորէին նոցա: Մեծ քոյրն յառաջ կոյս դարբնալ կձկեցաւ եւ ի սակս ընդ երկար փնալոյ կզակին ի վերայ բարձի՝

1 A չունի որ եւ է խորագիրը:

խղիւայթեալ էր կզակ նորա. այլ եւ սրունք նորա ծնկօքն հանդերձ մի ի վերայ միոյ եղեալ միանգամ՝ նոյնպէս առանց փոփոխելոյ մնային: Իսկ փոքր քոյրն ի միում կողման միայն, այսինքն է յաջակողմն իւր ընկողմանեալ մնայր եւ ի միւսն ոչ կարէր դառնալ, եւ ոչ եւս ոք կարէր զնա դարձուցանել. եւ այնպէս ի յարակայ մնալոյ իւրոյ ի մի եւ ի նոյն կողման խղիւայթեալ էր մարմին նորա ի նմին կողման եւ որդունք եռային ի նմա: Ուրախութեամբ տանէին եւ ստէպ զայս ասէին. Փա՛ռք քեզ Աստուած, փա՛ռք քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փա՛ռք քեզ: Եւ մխիթարէր զնոսա Աստուած քաղցր ծանօթութեամբ խորհրդոց իւրոց:

Ի՜նչպ եղեւ ի գիշերի միում անկանիլ ի վերայ նոցա թմբութիւն եւ երեւեցաւ նոցա այր մի փառաւոր եւ սքանչելի եւ ասէր, թէ «Այսօր ի մեծն² Հոռովմ ոմն ի սրբոց մեծամեծաց կատարի եւ փոխի առ Տէր. եւ որ այսօր ջերմեռանդն սիրով պահէ եւ աղօթս առնէ, զթողութիւն մեղաց եւ զչնորհս յԱստուծոյ ընդունի»: Եւ նա էր, հաւանական ստուգութեամբ, Եննովկենտիոս պապն մետասաներորդ³:

Դարձեալ յայլում աւուր տեսին երկօքին զտեսիլ վասն Մխիթարայ, որ բանայր զճանապարհն արքայութեան ազգիս Հայոց:

Դարձեալ տեսին վասն Մխիթարայ, որ յապարանս ինչ ջամբէին նմա:

Ոչ եղև խոտովութիւն ինչ ներքին զգայութեանց նոցա մինչեւ ի վախճան, այլ հանապազ զգաստ էին: Իրրեւ ամք չորք եղեն հիւանդութեան նոցա. յորժամ եղև ժամ ելիցն նոցա յաստի կենաց, փութանակի առանց տագնապելոյ նեղութեամբ իւրիք իրրեւ ի քաղցր քնոյ ըմբռնեալք երկիցս եւ երկիցս անոյշ չնչմամբ աւանդեցին զհոգիս իւրեանց ի ձեռս Քրիստոսի:

Յամին 1692: Վախճանեցաւ փոքր քոյրն իրրեւ զամ մի յառաջ եւ յետ այնորիկ մեծն յամի 1695⁴ ի յամառան: Եւ զկնի մահուն նոցա մարմինք նոցա նոյնժամայն սպիտակացան եւ թարմացան եւ կակղացան: Եւ եղին զնոսա ի շիրմի՝ մերձ երկուց եղբարցն ճգնասունն միայնակեցացն այնոցիկ, որք հոգեւոր դաստիարակք էին նոցա եւ սրբութեան վարուցն յորդորիչք⁵: Եւ ի գալ գիշերի յետ թաղման նոցա՝ բազումք տեսին զլոյս մեծ ծագեալ ի վերայ գերեզմանաց նոցա եւ հռչակեցաւ այս ընդ քաղաքն ամենայն: Ի կատարման Մարիամու ոչ գտաւ ի Սերաստիա Մխիթար պատանին, այլ ամաւ միով յառաջ զնացեալ էր անտի յէջմիածին, բայց ի կատարման Մանասէին գտաւ ներկայ:

² A չուցի մեծն:

³ Իննովկենտիոս ԺԱ. 21 սեպտ. 1676—1689, աւգոստ. 10:

⁴ Պէտք է իմանալ 1694, տե՛ս վարը, էջ 332:

⁵ AB յորդորեալք:

**ՀԱՍՏՈՑՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ
ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԵՐԱՊԱՏԻ ՌԱԲՈՒՆԱՊԵՏԻՆ
ՄԽԻԹԱՐԱՅ ՍԵՅԻ ԱՐՐԱՅԻ**

Յամի Տեառն 1676 եւ ի թուին Հայոց ՌձԻԵ. ի փետրուարի 7 ծնաւ մանուկն Մխիթար ի մասին Ասիոյ, ի զաւառին կապապոզովիոյ, ի քաղաքին Սերաստիոյ, ի բարեպաշտ ծնողաց: Անուն հօր նորա Պետրոս, եւ մօրն Շահրիստան: Եւ եղև ուրախութիւն մեծ. զի հայր նորա Պետրոս եւ երեքին եղբարք նորա առ հասարակ ի միում տան բնակէին, եւ երկոցուն եղբարցն ոչ եղև արու զաւակ, բայց միայն Պետրոսին: Եւ ի մկրտութեան նորա եղին նմա զանուն պապուն իւրոյ Մանուկ: Եւ մինչդեռ մանուկ էր, բազում անգամ ասէր՝ թէ «Ի յարբուս ժամանին իմ՝ կրօնաւոր լինիմ եւ ոչ աշխարհական»: Եւ եթէ ոք ասէր. «Աշխարհական լինելոց ես դու, եւ ոչ կրօնաւոր», նա ընդ այնպիսի բանս յոյժ վշտանայր եւ ընդդէմ ասողացն զայրանայր:

Իրրեւ հինգամեայ եղև մանուկն Մխիթար, ետուն զնա ի յուսումն Գրոց՝ առ քահանայի միում:

1684. Յիններորդ ամի հասակի իւրոյ ընկալաւ զչորս փոքր աստիճանս ի յԱնանիա եպիսկոպոսէն Սերաստիոյ:

1685. Յորժամ մերձենայր տաներորդ ամն հասակի իւրոյ, ծնողք նորա առաքեցին զնա ի տուն երկուց կրօնաւորեալ ճգնապահաց կուսանացն Մանասէի եւ Մարիամու: Արդ ի տաներորդ ամէ հասակի իւրոյ մինչեւ ցերեք-ընդ այլ մանկունս ուսանէր զեղանակս երգոց եւ ժամակարգութեանն: Եւ աստուածաշնորհ խրատուք եւ բարի օրինակօք կուսանացն ի վարս բարիս սնանէր. լսէր եւս զխրատ երկուց ճգնաւորացն Ալեքսի եւ Յովհաննու, այլ եւ երբեմն ի տուն ճգնաւորացն այնոցիկ երթայր, եւ զաստուածուսոյց բանս նորա ի տան կուսանացն էր յարաժամ զաստուածային Գիրս ընթեռնուլ, թէ խաղուց եւ ի դատարկութենէ: Յանկայր ճգնաւորացն եւ կուսանացն ճգնուաւ այլ եւ բանիւ կուսանացն, ուսաւ բարեք զհանդերձարարութիւն, եւ ի տան իւրեանց առնէր զգործն, միանգամայն եւ ի հոգեւոր իրս պարապէր:

1690. Իրրեւ չորեքտասան ամաց եղև, ծածուկ ի ծնողացն զգեցաւ եւ երեք ամաւ իսկ յառաջ ի գիւնոյ, ի մեղիմայն ի վերայ մերկ մարմնոյ իւրոյ: Որպէս այսինքն՝ ի խաղողոյ, ի խնձորոյ եւ յայլ սոյնպիսի պտղոց ամենեւիմբ հրաժարեալ էր: Եւ թէպէտ եւ ի յամենայն ազգ մրգաց եւ ի կաթնեղինաց եւս հրաժարիլ նկրտէր, բայց ցայս վայր ոչ թոյլ տային նմա կուսանքն վասն նոյն ժամանակի եւ վասն ապագայ ժամանակին: Այլ եւ զանչափ պահան, զոր վասն

հողեւոր փախաքանաց նորա ասացին նմա յանձն առնուլ, միայն ի նմին ժամանակի ըմբոն համարեցան նմա պահել, եւ ոչ յամենայն կեանս իւր:

Եղև նմա յամս ինչ ի քառասնորդական պահան յերկուս աւուրսն միանգամ ճաշել: Եւ ի միում քառասնորդական պահոց ընդ վեց շաբաթն ողջոյն զջուր ոչ էարբ: Այլ եւ ի շաբաթսպահանս ի պատիւ սրբոցն, որոց էին պահք, զաւուրս հինգ անսուաղ անցոյց միանգամ: Եւ բազում անգամ զաւուրս երկս նոյն պահոցն ոչինչ ճաշակեաց: Եւ զայս ի հասակի մանկութեան իւրոյ առնէր:

1691, ՌՃՊ. Եմուտ ի վանս սուրբ Նշանու, որ ի Սերաստիա, եւ զգեցաւ զգզեստ կրօնաւորական, եւ ի դալ աւուրն կիւրակէի, ի հնգետասաներորդամի հասակի իւրոյ, ձեռնադրեցաւ կիսասարկաւազ եւ սարկաւազ միանգամայն ըստ սովորութեան հայկազնոյ, երաշխաւորութեամբ երկուց կուսանացն, ի վերոյդրեալ յԱնանիա եպիսկոպոսէն, յառաջնորդէն նոյն վանացն, եւ կոչեցաւ Մխիթար ըստ անուան հօր պապուն իւրոյ: Յետ այսորիկ ի յայն վանս առաւելոյր Մխիթար պատանին զփոյթ իւր ի հողեւոր կրթութիւնս եւ ի յուսումն աստուածային գրոց, եւ զրովանդակ աստուածաշունչ Գիրս մտադիւր ընթերցմամբ բազում անգամ բովանդակեաց: Երբեմն գնայր առ Կուսանսն. երբեմն ի սենեկի իւրում յաղազս վարժութեան, քարոզէր առանձին ի բարբառս գրոց, եւ երբեմն գրէր զբազում բանս հոգեշահս, եւ ոտանաւոր չափով զհոգեւոր երգս վայելուչս: Բայց ցանկայր աշակերտիւ վարդապետի միում, որպէս եւ կուսանքն իսկ կամէին, բայց ոչ յաջողեցաւ: Իսկ ի յայն վանսն, ոչ գոյր գիր ուսման արտաքին գիտութեանց: Բայց զկնի ամի միոյ մտանելոյն ի վանս սուրբ Նշանու, 1692, եկն ի Սերաստիա Ղազար վարդապետ ոմն, եւ խորհրդով կուսանացն աշակերտեցաւ նմա: Եւ ըստ յանձնարարութեան վարդապետին, գնաց ընդ ուղեւորսն յԵւզոկիա առեալ ընդ իւր զեկեղեցական պատուական զգեստն զարարեալսն ի ծնողաց իւրոց, յորս էր նորա ազնիւ շապիկն՝ ոսկեհոտն զիպակազարդ լանջօք, եւ ոսկեհոտն ուրարն եւ արծաթապատ սաղաւարտն սարկաւազական: Եւ եգիտ յԵւզոկիա զհօրեղբայր իւր, եւ առ նմա եղև որչափ եկաց անդ: Անցին երկու ամիսք եւ ոչ յաջողեցաւ նմա գնալ ի Կարին. եւ հօրեղբայր նորա տարաւ գնա անդրէն ի Սերաստիա: Եւ իրբեւ մնայր անդ ամիսս վեց, եկն ի Սերաստիա Միքայէլ անուան արհեպիսկոպոս ի նուիրակութիւն առաքեալ յէջմիածնէն, եւ աշակերտեցաւ նմա: Եւ զկնի մնալոյ եպիսկոպոսին եւ քարոզելոյ ի Սերաստիա, տարաւ զՄխիթար պատանին ընդ իւր յԵւզոկիա եւ անտի ի Կարին: Ելին յԵւզոկիոյ ի զեկեղեցիք. եւ ի ճանապարհին վասն խստասրտութեան վարդապետին կրեաց զբազում նեղութիւնս անտրտունջ եւ անտրտում. զի ի ճանապարհին եւ ի վերայ խոր պաղեալ ձեանցն կողմնեալ ննջէր եւ գծունձ թաւարծին իւր միայն զանձամբ արկանէր, զկէսն ի ներքոյ եւ զկէսն ի վերայ ունելով: Եւ վարդապետին էին երկու երիվարք, յորոց մին համեռեալ ինքն նստէր ի նա. իսկ զմիւսն, զոր բեռամբ տանէր, պատանւոյն տուեալ էր ի նստիլ ի վերայ բեռանց նորա: Եւ առաւել խնայելով յանասունն, ստէպ հրամայէր նմա հետի ընթանալ: Եւ ի միում նուազի այնչափ վաստակեցաւ, մինչեւ յանգորութեան նստաւ յանցս ճանապարհին առ ըլրով միով, եւ ոչ ումեք փոյթ լինէր վասն նորա: Իրբեւ էանց օգուտ ժամ մի, եհաս անդ ոմն ի ջորեպանաց, որ յետս մնացեալ էր, եւ տեսեալ գնա, զթացեալ ի նա, եւ զձեռանէ նորա

կալեալ, եւ գնա ի վերայ զբաստու իւրոյ եւ հասոյց ի կարաւանն: Եւ ի մերձիւն ի Կարին ի դիւղ ուրեմն, ձին վարդապետին ի բաց կորգեաց ի մասնէ անտի նորա, որ առ ըթոյն, զոր նա բազում աղիւ պնդեաց պատանաւ, եւ մտեալ ի Կարին իջեմանցան ի խուցս եկեղեցւոյն. եւ վիրարութն բժշկեաց զձեռս նորա: Եւ գնեաց անդ զգիրս Գրիստոնէական խոկման⁶. բայց եւ զայն էառ ի նմանէ վարդապետն վասն նախանձու:

Եւ եղև անդ պատանւոյն Մխիթարայ սպասաւորել երբեմն սրբոյ Պատարազին, եւ բազումք ի կղերիկոսաց եւ ի ժողովրդականաց յուշի ունկն եղեալ ընթերցուածոց նորա, յորժամ զսուրբ Աւետարանն եւ զայլ ընթերցուածսն շնորհազարդ վերձանութեամբ ընթեռնոյր, սքանչանային ընդ սերտ եւ ընդ անայթաք վերձանն, եւ ընդ պատշաճ եղանակն, զոր ըստ իւրաքանչիւր բանից ընթերցուածոյն պահէր ի ընթեռնուն: Եւ ասէին վասն նորա առ միմեանս. Ո՞ր ոք ուստեք իցէ սա, կամ յորմէ՞ արդեօք գաւառէ եկեալ: Եւ ըղձանային իւրաքանչիւր ընտելանալ նմա: Եկն երբեմն յողջոյն վարդապետին մի ոմն ի Յիսուսեան Կարգէն, ի կերպարանս հայ քահանայի, որում հարցանէր Մխիթար պատանին թէ որպիսի՞ աղբ է Ֆուանկն: Եւ յետ աւուրց ինչ ելին գնացին 1693, ՌՃՊԱ. յէջմիածին. եւ էր յայնժամ վեչտասան ամաց:

Եւ յայնժամ էր Կաթողիկոս Տէր Նահապետն⁷: Եւ Մխիթար պատանին ծառայէր վարդապետին իւրում, խուժադուժ բարբարոսին, իրբեւ զգերի, եւ էր նորա սենեկապետ, եւ ծառայէր նմա մտադիւր սրտիւ ի մաքրութիւն խաւանացն, ի յարդարել զհանդերձս նորա եւ ի ընուլ զջուր ձեռաց նորա եւ այլն: Եւ յաղազս փոքր եւ ակամայ զիպուածոյ, անողորմ սրտմտութեամբ յարձակեալ ի վերայ՝ թշնամանէր գնա եւ խստադոյնս հարկանէր գաւազանաւ, մինչեւ ցաւ հարուածոցն յետ աւուրց ինչ ապա մեղմանայր: Եւ եկաց այսպէս անդէն իրբեւ ամիսս երկուս: Եւ բազում տքնութիւնն, եւ զի ժամանակն իսկ դարուն զիպաւ նմա՝ յորժամ էր յէջմիածին, զտեսանելիսն կարի վտանգեաց, մինչեւ ոչ լինել նմա հայիլ ի լոյս առանց սաստիկ ցաւոց խթելոյ բրաց աշացն իւրոց: Եւ միշտ կանխէր յաստուածային ի պաշտօնս ի գործ, ուր եւ յառաւօտու եւ ի տուրնջեան. եւ միշտ տային յայդեստան ի գործ, ուր լինէր: Եւ Չօլախ վարդապետն գուն գործէր գնա աշակերտել ինքեան: Եւ տեսեալ զաչս նորա արիւնալից, ասէ. Դեւն զքեզ յանդիման հարեալ է եւ անտի է ի քեզ ցաւդ այդ. եթէ ինձ աշակերտեսցիս, բժշկեմ. բայց նա ոչինչ համարէր գնա: Արդ՝ քանզի ոչ գոյր անդ գիտութիւն եւ փախեաւ. եւ գնաց յատութիւն, զկնի երկուց ամաց եւ անտի ի ծածուկ եւ փախեաւ. եւ ոչ աստուածալնապատն Սեւանայ, որ հետի է յէջմիածնէն իրբեւ գնացս երկից աւուրց ճանապարհի, ընդ սերաստացի ծանօթի իւրում Ստեփանոսի, միջնորդութեամբ մատակարարին էջմիածնին, որ էր թէոդորոս եպիսկոպոսն: Արդ գնացին նախ յԱրտաշատ զԳեակն, ուր է վիրապն սրբոյ Հօրն մերոյ Լուսաւորչին, եւ կատարեալ զուխտս իւրեանց ապա գնացին ի յանապատն Սեւանայ, որ

⁶ խոկումն քրիստոնէական վասն իւրաքանչիւրոց աւուրց ամսոցն. Թարգմանեցեալ... ի Յոհաննիսէ վարդապետէ, Վենետիկ 1687:
⁷ Նահապետ եղեսացի, 10 աւգոստ. 1691—1705 յունիս 13:
⁸ A հոդն:

կղզի ինչ է ի մէջ ծովակին, եւ կայ անդ վանք ճգնաւորաց Հայոց: Եւ անդ կատարեալ զուխտս իւրեանց եւ կացեալ աւուրս, կամէր եւս անտի գնալ. զի թէպէտ էր անդէն արտաքին խիստ ճգունք⁹, բայց ներքինն եւ աստուածպաշտութիւն չէր ամենեւին ի նոսա: Վասն որոյ արտասուալից հառաչանօք ստէպ աղօթս առնէր եւ դայս ասէր յաղօթս իւր. Ձի՞նչ լինիցի ինձ, Տէր, եւ կամ զի՞նչ արարից ես. զի եւ աստ ոչ եղև ինձ գտանել զտեղի կրօնաւորական վարուք կելոյ:

Եւ եղև ի միում նուազի առանձին մտանել յեկեղեցին, եւ ծուներ եղեալ առաջի պատկերի Աստուածածնին, կայր յաղօթս ցաւագին անձամբ. եւ յամենայն սրտէ աղաչէր զՄայրն ողորմութեան՝ սոցելու լինիլ ինքեան. եւ արտասուքն իրրեւ զվտակս ջուրց հեղանէին յաչաց նորա: Եւ զկնի բազում պաշտանաց եւ արտասուաց իւրոց՝ եկն ի վերայ նորա նիրհումն եւ անդէն ի քուն եմուտ: Եւ ահա երեւեցաւ նմա ամենօրհնեալ կոյս Մարիամ Աստուածածինն յայտնի՝ անշամանդաղ տեսլամբ. զի կայր անդ դէմ յանդիման, առանց ունելոյ ի գիրկս իւր զՏէրն մեր: Եւ ընդ նմա էին այլք ի սրբոց կուսանացն իրրեւ սպասաւորք: Եւ ինքն Տիրուհին զգեցեալ էր զհանդերձ ծաղկեայ, բովանդակ ծաղկէնկար: Եւ մինչդեռ ի զարմացման էր պատանին ընդ տեսիլն նորա, օգնական եղև նմա սուրբքն, որք ընդ ամենասուրբ Կուսին էին, եւ ասեն, թէ «Այս ինքն է տիրուհին մեր՝ ամենասուրբ կոյս Աստուածածինն»: Ընդ որ հայեցեալ պատանին՝ անպատմելի խնդութեամբ լցաւ սիրտ նորա: Եւ ապա ամենօրհնեալ Կոյսն սկսաւ մխիթարել զնա եւ ասել. «Ձի՞նչ կամիս եւ զի՞նչ խնդրես. խնդրես՝ եւ տացի քեզ»: Յայնժամ զօրացեալ պատանին շնորհօք Տեառն եւ լուսաւորեալ, զայն միայն, որ քան զամենայն հայցելիս լաւագոյն էր ճշմարտիւ, եղ առաջի նորա եւ ասէ. «Ես ոչ գիտեմ, Տիրուհի, թէ զի՞նչ իցէ ինձ պիտոյ եւ օգտակար, զի խնդրեցից. զայն կամիմ, զոր Դու կամիս. եւ զայն միայն խնդրեմ, զոր Դու գիտես, թէ ինձ պիտոյ է եւ կամիս տալ»: Պատասխանի ետ նմա Տիրամայրն եւ ասէ. «Բարուք է, կատարեցից քեզ զխնդրուածդ զայդ»: Եւ նոյնժամայն անյայտ եղև տեսիլն: Եւ պատանին զարթուցեալ ի քնոյ՝ եզիտ զանձն լի մխիթարութեամբ եւ քաջալերութեամբ եւ գոհացաւ զՏեառնէ: Եւ յայնմհատէ ամենեւին ոչ ջնջեցաւ ի մտաց նորա [գ]տեսիլ կերպարանացն ամենօրհնեալ Աստուածածնին. եւ յամենայն յաղօթս իւր զնոյն անէր զմտաւ: Այլ եւ յաւելաւ նա յայնմհատէ եւս առաւել ջերմեռանդն լինել առ ամենօրհնեալ Կոյսն եւ բարեյոյս լինել ի բազմազութ ողորմութիւն նորա:

Յետ այսորիկ ել անտի ընդ ուղեկցին իւրում Ստեփանոսի զնալ ի Հոսոմաստան. եւ եկեալ յերեւան իջեվանեցան աւուրս ինչ. եւ զնաց առ Հարս Յիսուսեան Կարգին իրր վասն աչաց իւրոց. բայց ոչ յաջողեցաւ զիպիլ նոցա: Եւ ապա զնեցին էչ մի. երբեմն ինքն եւ երբեմն Ստեփանոսն նստեալ զնային ընդ ուղեւորաց մինչեւ եկին մերձ քաղաքին Կարնոյ ի վանք մի՝ շինեալ յանուն սրբոյ Աստուածածնին, որ անուանեալ կոչի Բասենոյ վանք. ուր կայ եւ գերեզման Գրիգորի Մազիստրոսի գերայարդ վարդապետի. եւ առ նովաւ իջեվանս կալան ուղեւորքն: Եւ մտեալ յեկեղեցին ետես պատանին Մխիթար անդ ի ժամատան, հանդէպ մտից նորին՝ զպատկեր սրբոյ Աստուածածնին, ամենեւին յար եւ նման կերպարանացն, որով երեւեցաւ նմա ամենօրհնեալ

⁹ AB ճգանք:

Աստուածածինն ի վանս Սեւանայ: Եւ վասն աղաչանաց Մելիքիէթ կախկոպոսին, որ էր այր պարզամիտ եւ բարեբարոյ եւ առաջնորդ նոյն վանացն, եւ մանաւանդ վասն պատկերի Աստուածածնին, յանձն էառ զժամանակ ինչ մնալ անդ եւ ուսուցանել զմանկունս: Եւ անտի մինչեւ ի Կարին էր աւուր միոյ ճանապարհ. վասն որոյ զնաց ի Կարին ընդ ընկերի իւրում, էառ զհանդերձն առաքեալս ի ծնողաց իւրոց ըստ չափու պիտոյից իւրոց, եւ զաւելորդսն վաճառեալ զնեաց զգիրս. եւ ետ Ստեփանին զգիր ողջունի առ ծնողան եւ զարձաւ ի նոյն վանքն ըստ խոստման իւրում:

Առաջնորդն Կարնոյ Աւետիք կախկոպոսն, (սա է նա, զոր յետոյ ի Փրանսիա փախուցին. մասն բ, ամ. գ, թիւ 3 ցվերջ) յորժամ Մխիթար պատանին էր ի Կարին, կոչեաց զնա եւ խրատէր սուտակասպասութեամբ աշակերտել զնա: Իսկ նա անմեկին բանիւք հրաժարեցաւ եւ զնաց ի վանքն եւ այլ ոչ դարձաւ: Իսկ առաջնորդն վանաց կացոյց զնա լուսարար եկեղեցւոյն եւ զամենայն հոգս իրացն եւ զգաւաւորակութիւն մանկանցն ի նա յանձն արար: Եւ նա զամենայն ինչ մտաղիւր սրտիւ կատարէր, եւ աղօթից եւ ընթերցման Գրոց հպատակ լինէր: Կամէր Աւետիքն բռնութեամբ հանել զնա ի վանացն, բայց ոչ կարաց, զի Մելիքիէթ եւս բռնագոյն բրդաւ քան զնա. վասն զի ի Մարաց զաւառէն էր նա եւ զբազումս ի Գրթաց անտի ունէր իւր թիկունս: Բայց Աւետիքն զհրդեհն հարածանաց, զոր ամաւ միով յառաջ լուցեալ եւ բորբոքեալ էր, զօրհանապաղ արծարծանէր: Իրրեւ լուաւ զայս Մխիթար պատանին, եւս առաւել սկսաւ տեղեկանալ զխրաքանչիւրն մասանց Կաթուղիէ Եկեղեցւոյն, թէպէտ եւ յառաջագոյն զիտակ էր ի ձգնաւորացն եւ ի Կուսանացն: Եւ լուեալ վասն ձառնութիւն եւ տարակուսեալ՝ եղև ի միտս նորա առ սուրբ Կոյս Աստուածածինն զիմել: Ծուներ եղ վաղվազակի առաջի վերոյդրեալ պատկերի Աստուածածնին. եւ ընդ առաջին բացումն ահագին մատենին այնորիկ եւ ընդ նախկին հայեցումն աչաց իւրոց՝ գտաւ այն տեղին, զոր խնդրէր, ուր գրեալ կայր. Պատմութիւն սրբոյ Ժողովոյն Քաղկեդոնի եւ այլն:

Ընդ այն ժամանակս եկն ի Կարին վերոյդրեալ Ղազար վարդապետն եւ գրեաց վաղվազակի առ Մխիթար պատանին վասն երկուց փիլիսոփայից իւրոց. եւ շողոքորթէր զնա առնուլ յինքն աշակերտ. իսկ նա գրեաց թէ ոչ կամիմ: Եւ ի գրոց անտի ի վայելուչ յօրինուածոյն առաւել բորբոքեալ, եկն ի վանս եւ խօսեցաւ ինքնին առնել զնա աշակերտ. բայց նա ոչ զիջաւ: Եւ յաւուրն երկրորդի ընդ հրեշտակին Պարսից զնաց կախկոպոսն բազում արամութեամբ յէջմիածին: Եւ ի ճանապարհին՝ Օսմանցւոց պատերազմեալ ընդ Պարսիկս, ի բազում կոտորածին վերաւորեցաւ եւ Ղազար վարդապետն եւ բարձեալ տարան յէջմիածին:

Յայնմ ամի մինչդեռ կայր ի վանս Բասենու Մխիթար սարկաւազն, մեռան, եւ որդի եւս մեծատան միոյ, տիօքն հաւասար Մխիթարայ պատանւոյն, զորոյ զամենայն հանդերձն ետուն առաջնորդին վանացն (որպէս եւ սովորութիւն է ազգի մերում զկողոպուտ մեռելոյն՝ վաներիցուն իւրեանց տալ): Եւ կախկոպոսն, առաջնորդն վանաց, ետ զամենայն Մխիթարայ պատանւոյն եւ նա զգեցաւ. այլ ինամօքն Աստուծոյ ոչինչ փնաս եղև նմա: 1693. ՌժՈԲ. Եօթնհետան ամաց էր, յորժամ ի գեղջ միում գաւառին

այնորիկ, այրի կին մի կամեցաւ տալ նմա զգուստր իւր. եւ յայլմէ կնոջէ միոյ՝ բանիւք փորձեցաւ. բայց երկուցն եւս յաղթող քաջամարտիկ գտաւ: Եւ ըստ գրոյ եկելոյ յէջմիածնէն, շրջէր Մելքիսէթ եպիսկոպոսն ի նուիրակութիւն, որ միայն զիտէր զպատմութիւնն Տուրիթայ. եւ էառ ընդ իւր զՄխիթար պատանին, որում հրամայէր քարոզել, եւ նա քարոզէր: Եւ յայնմհետէ սկիզբն արար Մխիթար պատանին քարոզ լինել եւ ջատագով ճշմարտութեան կաթուղիկէ Եկեղեցւոյն. եւ ամենեցուն ամենայն ուրեք քարոզէր զճշմարտութիւնն: Եկաց ի յայն վանսն Բասենու զամ մի ողջոյն եւ զամիսս հինգ: Եւ զիր եհաս նմա ի Սերաստիոյ, թէ մինն ի կուսանաց՝ Մարիամն փոխեցաւ առ Տէր, եւ ի վերայ մարմնոյ նորա սքանչելի նշանք երեւեցան: Վասն որոյ կամեցաւ գնալ ի Սերաստիա. նախ զի գոնէ ի կատարումն կենաց քեռ նորա գտցի անդ. երկրորդ՝ անկեալ էր ի միտս նորա հայհոյական խորհուրդ. եւ ի հարցանել ցվարդապետ ոմն անցաւոր յաղազս չար խորհուրդոց առ հասարակ, նա պատասխանի ետ, թէ Չար խորհուրդքն քան զգործով կատարեալսն ծանր են. եւ կամէր հարցանել զայսմանէ սրբասնեալ կուսանացն այնոցիկ: Եւ մեկնեալ անտի Մխիթար սարկաւազն գնաց ի Կարին եւ իջեվանեցաւ ի տան բարեպաշտ Պողոսին, որ դարձեալ էր ի Հոովմայ, եւ պատմեաց նմա զամենայն իրսն Հոովմայ. ուստի վառեցաւ սիրտ նորա երթալ ի Հոովմ ի զէպ ժամանակի: Եւ ի տան Պողոսին ընթեռնոյր զգիրսն Կղեմայ եւ զայլ գիրսն: Եւ ապա գնաց ի Սերաստիա, ուր եհաս ի յունիսի, յամի Տեառն 1694. ՌՃԽԳ. եւ խնդութիւն մեծ եղեւ ծնողաց նորա եւ կուսին Մանասէի: Եւ եկաց ի վանս սուրբ Նշանու. եւ հանապազորդէր յընթերցումն սուրբ Գրոց եւ սրբոց վարդապետաց. (որպէս առնէր եւ ի ճանապարհին ի վերայ դրաստուն). եւ ստէպ գնայր առ Մանասէն:

Յայգուէ ցոր հասարակ ընթեռնոյր եւ յետ ճաշելոյ փոքր մի հանգուցեալ՝ դարձեալ ընթեռնոյր մինչեւ ի հասանել գիշերոյն. եւ ի գիշերի եւս լուսով ճրագի մինչեւ ի ժամանակն հանդստեան քնոյ ընթեռնոյր: Եւ ի ժամանակս գործոց զընթերցեալսն որոճայր եւ միտս բանիցն քննէր: Երբ զմինն սկսանէր՝ ի սկզբանէ մինչեւ ցվախճան ընթեռնոյր. եւ ապա նոյնպէս զայլ գրոյ բուն արկանէր: Եւ մինչչեւ զառաջին բանի քննութիւնն էր վճարեալ՝ առ երկրորդն ոչ աճապարէր: Եւ զոր ամենեւին ոչ իմանայր, զայն տեղին նշանակէր: Եւ զբազում բանս գրէր ի տոմսակի իւրում. եւ այսու օրինակաւ զբազում վկայութիւնս աստուածաշունչ Գրոց յերկոտասան ամաց հետէ իսկ առեալ էր ի բերան:

Յամին յայնմիկ եկն ի Սերաստիա Գրիգոր վարդապետ ոմն. եւ եկն յուխտ ի վանս սուրբ Նշանու եւ իջեվանս կալաւ անդ: Եւ եղեւ ի միում աւուր, զկնի ճաշածամուն մտանել նմա յեկեղեցին ի սակս աղօթից իւրայնոյվքն հանդերձ եւ բազմութիւն միարանիցն ընդ նոսա: Զկնի աղօթից տեսալ վարդապետին զգաւազանն յաւազ բեմին անդ, հրամայեաց Մխիթարայ սարկաւազին բերել զայն. եւ տեսեալ զպատուականութիւն զաւազանին ի տալն զայն Մխիթարայ գնել ի տեղւոյն, առ ծաղու ասաց ցնա. «Առ քեզ զաւազան իշխանութեան՝ քարոզելոյ գրանն կենաց» եւն: Իսկ Մխիթար պատանին թէպէտ իմացաւ զմիտս նորա, սակայն ծուներ եղ եւ համբուրիւ աջոյ նորա էառ ի նմանէ զգաւազանն ասելով. «Ընդունիմ զպարգեւս քոյին զերանմեծար վեհանձնութեանդ եւ առնում յօժարութեամբ»: Տեսեալ վարդապետին,

զի բանն այլ ընդ այլոյ եղեւ, ասէ ցնա. «Պարտ է քեզ նախ քարոզել» եւն. եւ նստան ի լսել: Եւ խնամովն Աստուծոյ, յորժամ զգաւազանն ի ձեռին իւրում առնէր, գտաւ ի տեղւոյն, ուր սովոր է քարոզելն կալ եւ քարոզել. եւ եզ գրնարանն. «Գաւազան զօրութեան առաքեացէ քեզ Տէր ի Սիոփէ եւ տիրեսցես դու ի մէջ թշնամեաց քոց» (Սաղմ. ճԹ. 2): Մեկնեաց զխորհուրդ բնարանին եւ բազում բանս խօսեցաւ աստուծեամբ վկայութեանց մինչեւ ցկէս ժամ եւ աւելի եւս:

Ընդ այն ժամանակս վարդապետ ոմն Յովսէփ, որ համարիւր փիլիսոփայ, զէպ եղեւ սմա յաւուրսն յայնոսիկ գալ ի Սերաստիա եւ իջեվանս կալաւ ի վանսն սուրբ Նշանու. եւ ջանայր աշակերտել գնա ինքեան, բայց նա ոչ կամեցաւ, զի ոչ գոյր ի նմա բան հոգեւոր: Զայսու ժամանակաւ շարադրեաց մեցաւ, զի ոչ գոյր ի նմա բան հոգեւոր: «Աղաչեմք զքեզ Աստուածածին». եւ ի Մխիթար սարկաւազն գերզն զայն. «Աղաչեմք զքեզ Աստուածածին»: Արար վերջն տանց երեք «Տէր ողորմեա»: Եւ կղերիկոսաց անդիտացեալ թէ նորա էր, երգէին զայն փոխանակ երգոյն «Աստուածածին մայր Գրիստոսի»: Արար ի վերայ սրբոց եւ զերգս չորս ի չորս մեծ տօնս երգելոյ, որոց առաջինն է ի վերայ սրբոց գլխաւոր առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի. երկրորդն՝ ի վերայ սրբոց Ստեփանոսի, երրորդն՝ Յակովբայ եւ Յովհաննու, չորրորդն՝ ի վերայ Եղբօր Տեառն եւ Դաւթի մարգարէին:

Յայտմ ամի եկն ի Սերաստիա վերոյգրեալ Զօլախ վարդապետն խոտակրօն, բայց խարերայ: Եւ պատիր բանիւք զարս պարգամիտս եւ զտիմար կանայս ահիւ տաղնապէր եւ զգոյս նոցա կողոպտէր: Եւ տեսեալ զՄխիթար պատանին՝ դարձեալ ստիպէր գնա աշակերտել ինքեան: Եւ տեսեալ թէ նա ոչ հաւատայ ինքեան, ասէ ցնա. «Ահա գնամ ես ի վանս իմ, որ է ի Կիպրոս. արդ՝ եթէ այժմ ոչ աշակերտեսցիս եւ ոչ եկեցես ընդ իւր, զիտասլիւր, զի զայսպիսի ինչ արարից քեզ, որպէս զի բոկ ստիւք եւ հորանի վիսով զհետ իմ գալ պնդեսցիս, զի բժշկեսցիս»: Սոյնպէս եւ բազում վարդապետք ջանացին զնա աշակերտել ինքեանց, բայց ոչ կարացին:

Յետ այսորիկ իրրեւ ամիսք հինգ եղեն լինելոյ Մխիթարայ սարկաւազին ի Սերաստիա եւ ինքն գեռ եւս էր ութեւտան ամաց, ի հոկտեմբերի 1694. ՌՃԽԳ. առատութիւն արեան եկեալ զաջօք նորա գերկոսին միանգամայն մթացոյց եւ միշտ տառապեցուցանէր: Վասն որոյ ել ի վանից անտի եւ եկաց ի տուն ծնողաց իւրոց վանս դարմանի. զի ի վանսն ոչ ոք զարմանէր. եւ որչափ զեղ առնէին, առաւել առատանայր արիւնն: Եւ ի գեկտեմբերի տարան գնա ի բաղանիս եւ արիւն առին. յայնժամ այնչափ զայրացան ցաւքն, մինչ թուէր նմա թէ ի վերայ լուսոյ պան դարմանի. յայնժամ այդ եղեւ, իմացաւ, ինչ անդադար հարկանէր. եւ աղաղակէր ի ցաւոյն: Եւ իրրեւ այդ եղեւ, իմացաւ, ի լոյս առաւօտուն, եւ աղաղակէր ի ցաւոյն: Եւ իրրեւ այդ եղեւ, իմացաւ, զի ոչինչ տեսանէր: Ո՞վ պատմեացէ զցաւս ընտանեացն: Եւ տեսին զի յաջոյ ախ(ա)ն նորա յորդութիւն մեա ջրոյ եկեալ էր ի վերայ եւ զրովանդակ բիր ինչ գոյացեալ էր եւ զլոյսն ծածկեալ: Բայց նա անտրտում կայր եւ ընծայէր զայն Աստուծոյ եւ ի սոյն յորդորէր զընտանեան եւ հայցէր յԱստուծոյ միջնորդութեամբ սուրբ Աստուածածնին, եթէ հաճոյ իցէ, գտեսութիւն ընկալցի՝ միայն առանց ձեռնկալի ցպով եւ կամ առանց ցպոյ իւրովի շրջել: Եկաց ի ցաւս յայս զայն ձմեռն ողջոյն. եւ ցաւն տառապեցուցանէր գնա, թէպէտ մեղմա-

ցեալ. սակայն եւ յայնմ ժամանակի ի տան ծնողաց իւրոց ոչ լռէր ի հոգեւոր կրթութեանց: Զմնացորդսն Յիսուս որդւոյն ի միտ էառ եւ եւս շարադրեաց զայբուրենական երգն:

Ամենօրհնեալ սուրբ Կոյս զթա՛,
Մտաց կուրիս իմաստս շնորհեա՛ եւն:

Իբրեւ եհաս դարունն՝ զաւուրս քառասուն դնայր առ ոմն տկար ի բարձից, որ դնէր դեղ յաչս նորա. եւ մաքրեցաւ յորդութիւն արեան յաչաց նորա եւ ցաւն փարատեցաւ. բայց մթաղին սեւաթոյր ջուրն յաջոյ ական նորա եւ ոսպնածեւ բիծն ձախոյ ական նորա դեռեւս կային. եւ ձախոյ ակամբն սկսաւ փոքր ինչ տեսանել եւ ծանեաւ զփառադիրն Զայ եւ դոհացաւ զՏեառնէ յաղագս լսելի լինելոյ խնդրուածոց իւրոց: Ապա ել ի տանէն եւ բնակեցաւ ի վանսն ի մայիսի: Եւ մինչ ի յամառն ոսպնածեւ բիծն, որ ի վերայ լուսոյ ձախոյ ական, անօսրացաւ, մինչեւ փոքր մի ընթեռնուլ զժուարութեամբ. եւ յետ ամսոց բաւականապէս տեսանէր եւ ընթեռնոյր, բայց անոյ ակամբն ոչինչ տեսանէր: Ի յամառն ետ խարան բանալ ի վերայ արտեւանաց աջոյ ական (բատ բանից սյւրոց): Բայց այնու ջիւն զալարեալ զկոպն վերին կողման ի վեր ամփոփեալ պրկեաց, բայց յետ ողջացուցանելոյ զխարանն անդէն ուղղեցան երեսք նորա: Ապա այնուհետեւ ի բաց եղեալ զամենայն դեղս՝ Աստուծոյ յանձնեաց:

Ի յայտ ամառան՝ փոխեցաւ առ Տէր Մանասէ կոյսն ներկայութեամբ Մխիթարայ սարկաւազին:

Յայնմհետէ Մխիթար սարկաւազն սկսաւ զուղղափառ հաւատոյ ճշմարտութիւնն ուսուցանել եկեղեցականաց ոմանց ի Սերաստիա: Սա եղեւ առաջին որ սկիզբն արար զճշմարտութիւնն ուղղափառութեան տարածել անդ. եւ յետոյ ի յայլ բազում տեղիս, թէ՛ ինքնին եւ թէ՛ ի ձեռն այնոցիկ, որոց ուսոյց: Եւ եկաց ի Սերաստիա ամ մի եւ երկու ամիսք. ապա կամեցաւ երթալ ի Բերիա եւ անտի ի Հոռվմ: Եւ զի փոխեցաւ առաջնորդն սուրբ Նշանու եւ նստաւ փոխան նորա Իսրայէլն հետ: Յայնժամ եկն ի Սերաստիա Յովնան վարդապետն Եւզոկիացի՝ քսան եւ վեց ամաց, նորոզ առեալ զգաւազան վարդապետական ի Գալուստ վարդապետէն, այն է Կայծակն, եւ իջեւանեցաւ ի վանս սուրբ Նշանու: Արդ յայտ ժամանակի Մխիթար սարկաւազն էր իննետասանամեայ:

Եւ ի մարտի ամսոյն 1695. ՌՃԽԳ. ել ընդ Յովնան վարդապետին Մխիթար սարկաւազն ի Սերաստիոյ ընդ ուղեկիցան: Եւ ի ճանապարհին արար զնա սին մերձ Մալաթիայ քաղաքին. եւ անդ էր դետ մեծ անկամուրջ յորդեալ վասն զարնան եղանակի: Եւ զիւր զօրաւոր զբաստն ետ Յովնան վարդապետին եւ էառ զնորա վատուժ զբաստն: Եւ յորժամ եհաս ի խորս գետոյն, հատաւ կապն տարաւ զզբաստն: Եւ ինքն այնուհետեւ լուղելով ընդ բազում ջուրն, բազում աշխատութեամբ ել ի ցամաք, ոչ յայնկոյս ուր պիտոյ էր, այլ յայսկոյս, զի չեւ եւս արարեալ էր զկէս ճանապարհն ի վտանգիլ զբաստին: Յայնժամ մի ոմն ի քաջաց ձիով անցեալ էառ զնա եւ տարաւ ընդ իւր ի ցամաք եւ զնացին

՝ Իմացի՛ր 1694:

մերձ ի քաղաքն ժամս երկս տողորեալ հանդերձիւք, զորս փոխեաց յիջեւանին: Եւ թէպէտ զբաստն այն հանաւ, բայց հակապան կորեաւ, ընդ նմին եւ գրեանքն եւ զրուածքն Մխիթարայ սարկաւազին: Իբրեւ հասին ի Բերիա, իջեւանս կալան ի խուցս եկեղեցւոյն. եւ մնացին իբրեւ ամիսս երկս ի Բերիա: Եւ էին ի Բերիա ոմանք ի Յիսուսեան Կարգէն, յորս էր Հայրն Անտոնիոս, որում խոստովանէին երկոքին, եւ արարին զգաւանութիւն առաջի նորա: Եւ նա բազում բանիւք յորդորէր զՄխիթար սարկաւազն չերթալ ի Հոռվմ: Եւ ետ նմա երկու դիրս. զմին իբրեւ վկայական առ հասարակ առանց կնքոյ եւ զմիւսն կնքեալ առ ընդհանրական մեծաւորն իւրեանց: (Գրեաց զվկայականն ի Հալէպ յամի Տեառն 1695, ի մայիսի 30: Դարձեալ ոմն ձիգլիթ գրեաց յվկայական ի Կոստանդնուպոլիս 1696, ի յուլիսի 15: Դարձեալ ոմն ձիգլիթ՝ յերզրում 1699, յօգոստոսի 22: Դարձեալ յէրզրում 1700, ի մարտի 9: Դարձեալ ոմն՝ յիզմիր 1702, ի հոկտեմբերի 20)¹⁰: Երբեմն Մխիթար սարկաւազն ի համբուրել զաջ նորա հաւատով մերձեցոյց յաչս իւր: Բայց զկնի երկու կամ երեք ամաց յուշ էած՝ թէ տեսանէ երկու աչօքն:

Արդ Մխիթար սարկաւազն զառաջին ժուժկալութիւնն եւ զխոտամբեր ճնշմունս ոչ եղ ի բաց ի պատճառս ճանապարհորդութեան, այլ նաեւ ի Բերիա հաւատարմի միում ետ կաղմել զմաշկեղէն շապիկ մի, յորոյ ի քամակին կողման ետ սեւեռել զերկաթի սայրասուր խայթոցս բազումս ի ձեւ խաշի մեծի յօրինեալ ի նմա եւ սեւեռեալ: Եւ ի լանջաց կողման նորա զայլ երկուս նոյնպիսի խաչս ի խայթոցաց յօրինեալս եւ սեւեռեալս աստի եւ անտի ստեանցն հանդէպ: Եւ զայն զցայգ եւ զցերեկ ի վերայ մերկ մարմնոյն կրէր: Եւ ի բաց եղ զմաղեղէն շապիկն սակաւ խայթոցիւքն զոր հանապաղ կրէր ի վերայ մարմնոյն:

Զկնի իբր երից ամսոց ելեալ ի Բերիայ եկին յԱղբաւանդրիա, ուր նաւահարստն է Բերիոյ: Եւ յետ աւուրց ինչ մտին ի նաւ մի պատրաստական Գալիլեացւոց: Յայնժամ եկին ի Բերիայ եւ մտին ի նոյննաւն Կաթողիկոսն Սոյ Պիժակ Գրիգորն եւ ընդ նմա այլ եպիսկոպոս մի, եւ եհաս նաւն ի Կիպրոս: Եւ իջեւանեցան ի Դուզլա եւ ձեռնադրեցաւ Յովնան վարդապետն եպիսկոպոս ի Կաթողիկոսէն ի վանս Հայոց, որ էր վերայդրեալ Զօլխս վարդապետին: Մինչդեռ նաւուն ելանելոյ ական ունէին, եկն ի վերայ Մխիթարայ սարկաւազին ծանր հիւանդութիւն ջերման վասն անբարեխառնութեան օդոյ Բերիին եւ անբարե յրակութեան ջրոյն, զոր սոսկ ըմպէր՝ զի ի գինոյ հրաժարեալ էր ի մանկութենէն, որպէս եւ ի մրգաց ինչ. միանգամայն եւ տապն արեգական նեղէր, քանզի յամենան յուլիսի եղեւ մնալն նոցա ի Կիպրոս, ուր բազում անգամ եղեւ նմա ի տօթաժամու ջրջլիլ: Եւ մտին ի նաւն. թէպէտ նաւալերորդ ժամէ աւուրն մինչեւ ցերեկոյ: Եւ մտին ի նաւն. թէպէտ նաւապետն ստիպմամբ էառ զնա: Իբրեւ եղեւ առազաստել նաւուն եւ յառաջ խազալ, կամեցաւ նա ելանել ի նաւէն. նախ՝ վասն տմարդի եւ գազանային բաբուց Կաթողիկոսին, երկրորդ՝ զի ի նաւին չէր բարի ջուր ի գովացումն կոպոսն (ոչ Յովնանն) ի սակս ունայն պատճառի ի բարկութիւնն եւ ի կոխբողեցան, մինչ զձեռս ի միմեանս մխել առաջի բազմութիւնն եւ ի կոխ վասն որոյ ել ի նաւէն ընդ վաճառականին, որ զառնալոց էր նաւակաւն իւրով

¹⁰ Փակագծի մէջ առնուած մասը ըստի A:

ի քաղաքն, եւ զնայ յիջև վան իւր: Եւ ո՛վ պատմեսցէ զաղէտն Յովնանու եպիս-
կոպոսին եւ Մխիթարայ սարկաւազին ի մեկնիլն միմեանց. ըստ որում նա
այնպէս հիւանդագին առանց օգնականի յօտար երկրի մնալոց էր: Ի վաղիւն
տեսեալ զի չէր ինքեան ոք օգնական՝ վարձեաց դրաստ եւ ել զնայ ի Սաղա-
մինա մայրաքաղաք կղզւոյն այնորիկ, ուր եւ ի Հայոց ազգէ վաղնջական
բնակիչք են եւ ունին զեկեղեցի եւ խուցս առ նովաւ. եւ հասեալ անդր իջե-
վանս կալաւ ի խցի միում եկեղեցւոյն: Իսկ հիւանդութիւն նորա օր ըստ օրէ
սաստկանայր: Եւ յետ երից աւուրց աշխարհականքն տարան զնա գրաստու.
Եւ ընկեցին ի վանս Հայոց, որ հեռի էր ի քաղաքէն աւուր միոյ ճանապար-
հաւ, եւ առաջնորդ վանիցն էր վերոյդրեալ Չօլախ վարդապետն, բայց ոչ
գտաւ նա անդ: Ճգնաւորքն վանաց այսորիկ էին խստակրօն յոյժ յոյժ, բայց
զազանակերպ մարդիկ. եւ զօրն ամենայն կուռէին եւ յերեկոյն այր իւրա-
քանչիւր ի դուռն խցի եղբօր՝ թողութիւն խնդրէին: Արդ քանզի յառաջա-
դոյն, յորժամ Մխիթար սարկաւազն ի պատճառս ձեռնադրութեան Յովնանու
եպիսկոպոսին ի վանս նոցա զնացեալ, լուան ի նմանէ զրանս ուղղափառ հա-
ւատոյ եւ մխեցան ընդդէմ նորա յատելութիւն: Նմին իրի այժմ ի խարխուլ
խցի միում եղին զնա եւ զոչինչ ետուն նմա: Իսկ նա միայն զասուեղէն զմեծ
եւ զթանձր վերարկուն իւր զանձամբն անուոյր յընկողմանիլն իւրում՝ զկէսն
ի ներքոյ եւ զկէսն ի վերայ իւր ունելով: Իսկ խարխարեալ խուցն այն էր ի
վերայ տանեաց սենեկաց վանացն, յորոյ ի միում կողմանէ էր գառիվայր
ճանապարհ, ընդ որ լինէր հետի իջանել ի տանեաց անտի եւ զնալ դուրս
ի վանացն: Իսկ արտաքոյ վանացն էր պարտէզ, որ փոքր ինչ աւելի քան
զերիս քարընկէցս ի վանաց անտի հեռի էր: Եւ ի պարտիզի անդ ի քարա-
ծերպի միում բղխէր ջուր յորդառատ եւ երթայր լնոյր զաւազանն մեծ, որ
յայրէ անտի հեռի էր իրրեւ տասն կանգնաւ: Եւ ի յաւազանէ անտի զեղեալ
զնայր ծաւալէր ընդ պարտէզն եւ ընդ այլ տեղիս: Իսկ ի քարածերպի անդ ի
տեղւոյն, ուստի ջուրն բղխէր, էին աստի եւ անտի միաձոյլ քարայտակ
զիճին տեղիք, յորոց զօրէն քրտանց ջուրք թորէին, զի էր տեղին սունքար:
Արդ ջերմութիւն նորա զամենայն օր զնա ըմբռնեալ տագնապէր: Յերբօր
ժամու աւուրն հասանէր ի վերայ եւ մինչեւ ցերեկոյ ոչ թողոյր զնա: Եւ այն-
չտի սաստիկ լինէր տապ նորա, մինչեւ անզգայացեալ ելանէր ի խցէն եւ
իջանէր զնայր ի պարտէզն. եւ զհանդերձսն ի բաց եղեալ յաւազան սառնորակ
ջուրցն իջանէր եւ ոչ իմանայր զինչ առնէր. եւ ստուգիւ հեղձնոյր՝ եթէ լու-
ղիւ չգիտէր: Եւ յանկանիլն շրտուցեալ ի ցրտութենէ ջրոյն վաղվաղակի
իինքն զառնայր եւ նոյնժամայն ի դուրս ելանէր. եւ զգեցեալ զհանդերձս իւր
եւ զվերարկուն զանձամբ արկեալ անդէն առ եզերք աւազանին ի վերայ դա-
լար խոտոյ ընկողմանէր: Քանզի յանզօրութենէ ի վանսն զառնալ ոչ կարէր:
Եւ զի ի միջօրէի դիպէր այս նմա եւ եղանակն էր ամառնային յամսեանն յու-
լիսի՝ շոգն արեգական զնա տագնապէր եւ բազմութիւն օձից առ նովաւ
չըջեալ՝ վտանգէր. քանզի օձուտ էր վայրն: Ապա զկնի միոյ ժամու ստիպեալ
ի տապոյ արեգական՝ զնայր ի քարայրն ուստի ջուրն բղխէր. եւ անդէն ի
միում կողմանց առուին, ուր անդատին քարայտակ զիճին տեղին էր, ընկող-
մանէր մինչեւ ցմուտս արեւու. եւ երբեմն զոտս իւր ի ջուր առուին կախէր:
Ապա ի սաստիկ թուլութենէն¹¹ յափսիթերս երթայր ընդ ճանապարհն զառի-

¹¹ A զոգութենէն:

վեր եւ անհարթ, երկոտասան անդամ զկայ առեալ՝ քաջալերէր զինքն յի-
շատակաւ անուանց երկոտասան առաքելոցն Փրկչին: Եւ այս անցք աւելի
քան զտասն անդամ եղև: Չայս ամենայն գիտէին ճգնաւորքն, բայց առ ատե-
լութեան անփոյթ էին: Եւ ահա խոհակերն կշտամբէր զնա բազում թշնա-
մանօք՝ թէ ընդէ՞ր ընդ հասարակաց ի միասին ոչ ուտես, եւ տայր նմա զփոքր
ինչ ձիթապտուղ աղի եւ խակակաթ եւ զհաց ի գարեխառն ցորենոյ: Եւ նա
առ հարկի ուտէր զայն եւ գոհանայր զՏեառնէ. այս էր կերակուր նորա գա-
միոս երկուս: Եւ իւրաքանչիւրքն կշտամբէին՝ թէ ընդէ՞ր ի ժամու հասա-
րակացն աղօթից ոչ կանխես յեկեղեցի ընդ մեզ: Այլ նա յամենայն վիշտս իւր
անտրտունջ համբերութեամբ կայր ուրախ եւ գոհանայր զԱստուծոյ: Եւ եղև
յետ այսորիկ գտաւ անդ եպիսկոպոս ոմն յեկաց անտի ի վանս: Չսա աղա-
չեաց եւ ասէ. Արա՛ ինձ վասն Աստուծոյ փոքր ինչ թան, այսինքն ապուր,
եւ օրն էր վարդապետ ի Յուլիսի: Չողաւ եպիսկոպոսն ինքնին ի խոհարանն
եւ հառ ալիւր բռամբ միով եւ հարկ զայն ի սոսկ ջուր եւ արար խիւս: Եւ
գտեալ ուստեք սակաւ ինչ իւղ կաթին, խառնեաց ի նա եւ եփեալ զթանն
երեր մատոյց նմա: Եւ այնչափ օգուտ եղև նմա կերակուրն այն, մինչ թուէր
նմա թէ ողի էառ, եւ իբր թէ ի կեանս իւր չէր այնպիսի ինչ կերեալ: Եւ քա-
ջալերեալ զօրացաւ: Եւ եպիսկոպոսն այն եւ այլ ոմանք ուխտաւորք տարան
զնա ի քաղաքն ի խուցն եկեղեցւոյն: Եւ խնդրեաց զեղ ի Փռանկ կրօնաւո-
րացն, իսկ նոքա ոչ ետուն, զի մեռանի դա ասեն: Ոմն ի Հայոց ետ նմա զեղ
մաքրողական, բայց առաւել նիհարացաւ ի սաստիկ լուծմանէն: Ի միոս
նորա եկեալ խրատն կուսանացն, սկսաւ յայնմ հետէ երբեմն զմտեղէն ուտել:
Յաւուր տօնի Եփեսոսի սուրբ ժողովոյն յՕգոստոսի, ի ստիպել քահանայիցն
նա նղովեաց գիշտակորոս: Ապա ցալով չողաւ շրջեցաւ փոքր մի ի հրապա-
րակս քաղաքին: Յայնժամ կալաւ զնա հարկահանն եւ տարեալ մատոյց նմա
քաֆէ, եւ զգրամս հարկի նորա էառ ի գլխաւորէն Հայոց: Ապա զնայ յիջե-
վանս իւր. յետոյ զնայ առ եպարքոսն, եւ նա երաշխաւորութեամբ ուրումն
ի Յունաց ազգէն, ետ նմա զհրամանագին փութացաւ զնալ ի Դուզլայն. եւ գտեալ զնա մի
Մխիթարայ սարկաւազին փութացաւ զնալ ի նաւէն՝ յուղի անկեալ գիւղէ ի գիւղ
պատրաստական հմուտ ի նա. եւ մի ոմն յարեղայից ուղեկից եղև նմա: Եւ
նաւեցին հասին ի Սելեւկիա. եւ ելեալ ի նաւէն՝ յուղի անկեալ գիւղէ ի գիւղ
իջեվանս առնելով եկն յԱնտիօք եւ անտի ի Բերիա. իսկ զուտեսան խնդրէր
աստի եւ անտի: Ի ճանապարհի զբազում տառապանս կրեաց. երբեմն վար-
ձեալ գէշ՝ նստէր, երբեմն հետի երթայր: Եւ մինն ի հողաթափից պատա-
ռեալ մերկ երկու ոտիւք, առանց զանկապանի երթայր ի սայրասուր քարա-
ժայռ ուղին, եւ անտի յաւելաւ եւ կերցաւ: Ի Բերիա ոմանք ի բարեկամաց
դարմանեալ զնա՝ ողջացաւ. միայն մնաց ի նմա փոքր ինչ զեղնութիւնն առա-
ջին եւ տենդն: Ի յայս երկրորդումս նուազի գալոյ նորա ի Բերիա, ոչ դտաւ
անդէն զՀայրն Անտոն, բայց այլ Հարքն Յիսուսեան՝ ծանօթք նորա, յար-
դօրէին զնա երթալ ի բուն գաւառ իւր: Վասն որոյ ել ի Բերիոյ եւ եկն յԱն-
թապ: Ի դժբերոյ դրաստապանին՝ զնայ հետի նորոգ լուացեալ եւ ծանրացեալ
ոչ ոք ողորմեցաւ նմա: Եւ ի քայլելն հասանիլ կարաւանին՝ լքաւ անկաւ ի
ճանապարհին եւ կողմնեցաւ յանցս ճանապարհին օգուտ ժամս: Եւ ահա ոմն

¹² A չուսի փակաղծի մէջ առնուածը:

այլազգի փայտահար յետ վաճառելոյն զփայտն դարձեալ էր ի քաղաքէն եւ երթայր ի շէն իւր: Եւ տեսեալ զնա զթացաւ, ձեռն ետ նմա եւ եհան ի գրաստ իւր եւ տարաւ ի դիւղ իւր. զի եւ ինքն իսկ անտի էր: Եւ հասեալ ի կարաւանն Մխիթարայ սարկաւազին խնդրեաց վարձել զգրաստ մի քորոյ, այսինքն բեռկիր, ոչ եզիտ: Աղաչեաց զոմն ի ծանօթից իւրոց եւ հաղիւ զբեռիկն նորա հառ: Իսկ ինքն երթայր հետի. զցերեկն ի յաշխատութեանց ընթանալոյ նուազէր եւ զցայսն ի բացի ընկողմանելով մէջն միայն վերարկուաւ ի ցրտոյ վտանգէր. զի ի վերջին աւուրս աշնանային ամսոյն եղեւ ճանապարհորդութիւն նորա: Ուստի յաւերաւ ջերմն նորա եւ օր ընդ մէջ ըմբռնէր զնա իրբեւ զատաջինն: Իրբեւ մնաց երկուց աւուրց ճանապարհ ի հասանելն ի դիւղ ուրեմն՝ եզիտ զբերիվար մի ի վարձու եւ նուաւ եմուտ ի Սերաստիա՝ նոյեմբերի 1695. ՌձԽԴ:

Ի նմին աւուր լուաւ մայր նորա թէ Մխիթար որդին իւր մեռաւ: Ի մտանելն Մխիթարայ սարկաւազին ի Սերաստիա պատահեցաւ նմա քեռայր նորա եւ ի խնդութենէն տարաւ զաւետիս առ մայր նորա. եւ նա անդէն եմուտ ի տուն, եւ նուազեցաւ մայր նորա. եւ հայր նորա եւ ամենայն ընտանիքն լցան խնդութեամբ: Եւ եղին զնա ի մահճի եւ առանց զեղոյ իսկ առողջացաւ, որ չորեքամսեայ ժամանակաւ ի խօթութենէն հիւժեալ էր: Յայսմ երկրորդ դարձի իւրում ի Սերաստիա, յորժամ առողջացաւ ի նախասացեալ խօթութենէն, զնաց փութանակի ի վանս սուրբ Նշանու եւ անդ զբազում երգս հոգեշահս յօրինեաց եւ զԱռակաց զիրան Սողոմոնի արար ոտանաւոր ըստ մասին: Ոմն ի միարանից վանաց այնորիկ այսինքն Ծառուկն, միւսեցաւ ի խուց նորա եւ զամենայն ձեռագիրս նորա այրեաց. որում ի հարցանելն Մխիթարայ սարկաւազին, թէ «Ո՞ւր են», պատասխանի ետ. «Ես ինքնին զամենայն առեալ ի հուր ընկեցի, զի ի միջոյ անտի նորա փախիցէ Հողին սուրբ»: Իսկ նա ոչ բարկացաւ, այլ կայր սիրով ընդ նմա իրբեւ զատաջինն: Ի ձմեռան եկն ի վերայ նորա հազ՝ մինչ արիւն թքանել: Եւ ի լինել զարնան ստիպեալ ի միարանիցն վանաց եւ յերեւելի անձանց քաղաքին, ձեռնադրեցաւ քահանայ, եւ Ծառուկն ընդ նմա: Յառաջ եւ զինի արար բազում աղօթս, ապա մատոյց զատաջին պատարագն:

1696. ՌձԽԵ. ի մայիսի 17 օրն հինգշաբթի¹³, ի դարնան քսան ամաց էր յորժամ ձեռնադրեցաւ քահանայ եւ ձեռնադրեցաւ ի Կուռուցի Կարապետ եպիսկոպոսէն ընդ Ատանացի Ովանէս վարդապետին: Վասն քահանայութեան Մխիթար արեղային ունիմք երկուս վկայականս ի յերկուց, զորոց օրինակն գրեմք աստէն: Նախ զԿարապետ եպիսկոպոսին.

(Տ. Կ.) (Յիսուսի Քրիստոսի ծառայ. Կարապետ եպիսկոպոս թուին ՌձԺԷ.) «Պատճառ գրոյս այս է, որ ես Կարապետ պարոն տէր, որ է Նշանու հանդերձ Յովհաննէս Ատանացի վարդապետին օրհնեցաք զՍերաստացի Մխիթար սարկաւազն՝ Տէր Մխիթար արեղայ, վկայութեամբ քահանայից եւ ժողովրդոց, իշխանաց եւ տօրաթաւորաց: Այլ եւ ինքնայօժար կամօք եւ ոչ բունութեամբ կամ յակամայ, այլ յօժար կամօք իւրովք: Դարձեալ եւ սա կեցեալ է ի դուռն սուրբ Նշանու մենաստանին

¹³ Հեղինակը նոր տոմարի կը հետեւի:

ամս հինգ, վարժելով ի տառս հնոց եւ նորոց կտակարանաց Աստուածաշունչ մատենից. այսուհետեւ մի ոք հակառակեցի ընդ Տէր Մխիթար արեղային, այսու ձեռագրամբս թուին Հայոց ՌձԽԵ ամին, մայիսի Է.ին. պատկեր աւուր հինգշաբթին. այսքան առ այս: (Կատարեցաւ այս)»:

Երկրորդ՝ գրեմ զՅովհաննէս վարդապետ (Տ. Կ.) (Է Յիսուսի Քրիստոսի ծառայ Յովհաննէս վարդապետ Ատանացի. ՌձԼԴ.) «Պատճառ գրոյս այս է, որ ես Ատանացի Յովհաննէս վարդապետս, որ եմ աշակերտ Բաղէաշէցի վարդանայ Մեծի վարդապետին, եկի ի Սերաստիա, սուրբ Նշանու վանքն հանդերձ Կուռուցի Կարապետ եպիսկոպոսին օրհնեցինք Հարեղայ զսերաստացի զՏէր Մխիթարն. վկայութեամբ քահանայից եւ ժողովրդոց: Այլ եւ ինքնայօժար կամօք օրհնեցինք արեղայ զՄխիթարն՝ Տէր Մխիթար. որ եւ սա կապեալ ի դուռն սուրբ Նշանու մենաստանին ամս հինգ հմտանալով ի գիրս Հնոց եւ նորոց Կտակարանաց Աստուածաշունչ տառից: Այսուհետեւ մի ոք հակառակեցի ընդ Տէր Մխիթար Հարեղային, այսու ձեռագրամբս թուին Հայոց ՌձԽԵ ամին, մայիսի ամսոյն եօթնին, պատկեր աւուր հինգշաբթին»:

Յետ այսորիկ Մխիթար արեղայն առաւելեալ ի յեղձս բարի վարուց եւ ի ցանկութիւնս հրաւիրելոյ զմերձաւորս իւր ի ծանօթութիւն կաթուղիկէ սուրբ հաւատոյն, ետայր հողուով եւ ոչ ժուժէր լուի ի խօսելոյ գրանն ճշմարտութեան: Եւ մինչդեռ զսակաւս ածեալ էր ի ծանօթութիւն ուղղափառ հաւատոյն, էարկ Աստուած ի սիրտ նորա զխորհուրդ աստուածահանոյ գործոյ միոյ մեծի. եւ սկսաւ մտախոհ լինել՝ թէ ես միայն չեմ բաւական զծանօթութիւն ուղղափառ հաւատոյ ընդ ազգս մեր ողջոյն տարածանել. ապա յետ փոքր ինչ բազմանալոյ քարոզութեամբ իմով յուղղափառութիւն եկելոցն, կարեւոր է ինձ զոմանս յայնցանէ, զորս եւ շնորհեցէ ինձ Տէր, ընդ իս առնուլ եւ նոքք գրանն ճշմարտութեան յազգս մեր ծառայել: Եւ սկսաւ յայնմ հետէ փութոյ պնդութեամբ յերթեւեկան իւր ի վանան՝ խօսել զճշմարտութիւն: Եւ հաստատէր բազում վկայութեամբ Աստուածաշունչ զրոց եւ Հարց սրբոց, զորս հաւաքեալ էր ի ձառընտրից եւ ի յայլ գրոց. եւ զբազումս օրինակաւ վարուց իւրոց ձգէր յունկնդրութիւն բանից իւրոց: Յորոց մի էր պատանի ոմն Յովհաննէս անուն եւ երիտասարդ մի Յովսէփ անուն: Սոքա երկոքին յարեցան ի նա զհետ երթալ վարուց նորա: Ընդ այն ժամանակս եզիտ զթովմաս Գեմբացին. զմասն ինչ նորա ետ Յովհաննու: Եւ նա փութով փոխեաց զվարս իւր. վասն որոյ ծնողքն նորա (այսինքն Յովհաննու եւ Մխիթարայ արեղային. վասն բուցին խոովութիւն մեծ ի վերայ Յովհաննու. իսկ Յովհաննէսն ընդ Յովսէփայ որոյ Մխիթար արեղայն զնաց յեւտարիմ աղքատ բարեկամի միոյ եւ յետոյ յաւուրս ինչ զօղեցաւ ի տան հաւատարիմ աղքատ բարեկամի միոյ եւ յետոյ ընդ առաջնորդողի միում զնաց ի գաւառն Ակնայ: Յայնժամ Ծառուկն ի ջերմութիւն իսկզեցաւ եւ զլշերայն գաղտ տարեալ ի վանս թաղեցին ի պարտիզին գորոյ...¹⁴ էին ի ջերմութիւն աշխարհական մի, քահանայ մի, վարդապետ մի՝ Դաղար եւ եպիսկոպոս մի: Եւ մինչդեռ յայսմ տաղնապի էին, եկն Մխիթար արեղայն ի Սերաստիա, բայց ոչինչ արարին նմա վնաս¹⁵ վասն անին:

¹⁴ A այս տեղ չորսուկէս տող գտտարկ տեղ կը բուզուի:
¹⁵ A չունի «վնաս»:
 Համդ. Ամս. 1949, Թ. 4—12:

Եւ ի հարցանել նորա վասն Ծառուկին, ասեն. Նա ընդ Ղազար վարդապետին ի նուիրակութիւն չողաւ. եւ յորդորէին զնա գնալ: Եւ ծնողքն Յովհաննու գիծեցին ի վերայ նորա¹⁶ խնդրել զորդին իւրեանց, իսկ նա ոչ գիտէր թէ զինչ եղեւ: Յետոյ ծանուցեալ ի Յովսէփայ զնաց ի յԱկն¹⁷ եւ երեւր զնա:

Ընդ այն ժամանակս եկն ի միտս Մխիթարայ արեղային երթալ առ Խաչատուր վարդապետն Կարնեցի եւ լինել նմա գործակից եւ ձեռնառու, իսկ Խաչատուր վարդապետն հեղինակ վասն խորհեալ գործոյն իւրոյ: Ապա ասէ Յովհաննէս. Ես երթամ ի Կոստանդնուպօլիս եւ դու յորժամ յաղթեսցես եւ ազատ մնայցես, յայնժամ առ իս եկեսցես ի Կոստանդնուպօլիս եւ ընկալայց զքեզ: Եւ ինքն զնաց եւ հհաս ի Կոստանդնուպօլիս 1697. ՌՃԽԶ: Յայտնեաց զխորհուրդ իւր Խաչատուր վարդապետին, բայց նա ոչ հաւանեցաւ եւ ասէր թէ «Առ այժմ իսկ պիտոյ էր 500 քսակ»: Եւ մնաց Մխիթար արեղային ի Կոստանդնուպօլիս ամիսս ինչ եւ ստէպ զնայր ի Պերա Կոստանդնուպօլիսոյ, այսինքն ի Խալաթիա եւ յԵկեղեցին Փռանկաց պատարագէր եւ զբազումս ի Հայոց արար ուղղափառ, եւ հրաւիրելու ի տունս նոցա: Ընդ այն ժամանակս եկն Յովհաննէս¹⁸ ի Կոստանդնուպօլիս առ Մխիթար արեղային: Եւ ի յառաւելուլ համբաւին Մխիթարայ արեղային առ քահանայս եւ առ աշխարհականս, հրաւիրեցին զնա յԵկեղեցին սրբոյ Լուսաւորչին քարոզել: Եւ էր իջեւանեալ ի խուցս Եկեղեցւոյն, եւ դեռ քսան ամաց էր: Յաւուրսն յայնստիկ աշակերտեցաւ նմա եւ այլ ոմն երիտասարդ Յօհան անուամբ (այն ինքն է երկրորդ Հայր Մանուէլն): Թիւ աշակերտացն եղեւ երկու:

Եկաց ամիսս հինգ ի Կոստանդնուպօլիս եւ յուսահատեալ ի Խաչատուր վարդապետէն խորհեցաւ երթալ ի կողմանս Կարնոյ՝ ի յՕխտիկ դաւառ, ուր կայր ոմն ի յուղղափառ քահանայից անտի բարեկամ իւր. եւ զի գաւառն այն մերձ է ի սահմանս Վրաց, ուր սակաւ են Հաղարացիքն. եւ անդ սկսաւ աշակերտս հաւաքել եւ ուսուցանել զնոսա եւ առնել իւր ընկերս ի քարոզութիւն եւ ի ծաւալումն ուղղափառ հաւատոյն: Եւ զի ոչինչ գոյր ի ձեռս նորա¹⁹ ի պէտս ճանապարհին, վասն այնորիկ օգնականութեամբ բարեկամացն, ընդ երեկոյսն ի փոստունսն երթայր, մանաւանդ վասն հոգւոց նոցա, եւ զգիշերն ողջոյն անդ մնայր. ի միում գիշերի ի միւսն, եւ ի միւս գիշերի ի միւսն. եւ ի հաւաքել ամենայն գործաւորաց փոստն ի միասին, զաստուածային բանսն խօսէր նոցա, եւ տային նմա ողորմութիւն: Եւ յորդորմութեանց աստի զնեաց զԱստուածաշունչ²⁰, Թովմաս Գեմբացի եւն եւ զպատկերս:

1697. Եւ եմուտ երկու աշակերտօքն ի նաւ մի, (որ ի Տրապիզոն էր զնալոց) ի սեպտեմբերի: Իրրեւ մեկնեցան ի նաւահանգստէն քաղաքին իրրեւ վաւաւանս 800, յարեաւ ալէկոծումն, եւ ժանտամահն զբազումս սպանանէր. եւ էր նաւորդացն բազմութիւն յոյժ: Եւ հապիւ հասեալ ի նաւահանգիստն Արակլիա, այսինքն էրէկլի²¹, ել ի նաւէն եւ եկաց անդ աւուրս ինչ. եւ ապա գտեալ զնաւակ մի՝ եմուտ անդր իւրովքն. եւ ի հասանել ի խորն, յարեաւ ալէկոծութիւն մեծ, զոր տեսցես յերգն նորա «Վիրաւորեցայ մեզօք», եւ

¹⁶ Այս ինքն՝ Մխիթարայ:

¹⁷ A յԱկնա:

¹⁸ B առաջինն Յովհաննէսն:

¹⁹ Այս ինքն Մխիթարայ ի Կ. Պոլիս:

²⁰ Ոսկանի տպագրութեամբ:

²¹ AB էլէկլի:

եկին ի ցամաք. եւ ի վիլիլեալ յարկի լուցեալ զխարոյկ ցամաքեցուցին զձորձս իւրեանց: Եւ յետ երկու աւուր դարձեալ նաւեցին եւ հասին ի Սինոպ, եւ կային անդ աւուրս ինչ: Եւ զի ոչ գոյր նաւ պատրաստ երթալ ի Տրապիզոն, գէժ եղ երթալ ի յԱմիսոս, այսինքն Սամիսոն եւ անտի ընդ ցամաք ճանապարհաւ Մարզուանու²²: Եղիտ զնաւակ մի, եւ անդր մտեալ իւրովք հանդերձ, զնացին ի յԱմիսոս եւ անտի զնաց ի ցամաք ի Մարզուան: Եւ զբազմամասնայ աւուրս քարոզեաց, եւ ի յԱմասիա, որ մերձ էր Մարզուանու, ի բազում աւուրս քարոզեաց. եւ ի յերկու քաղաքացս քարոզութեամբ եւ բարի վարուք արար զբազումս ուղղափառ, մանաւանդ ի քահանայիցն Ամասիոյ զՏէր Յակոբն:

Ի գարնան զնաց յԵրզնկիա աշակերտօքն Հանդերձ, եւ ընդ կարաւանին զնացին ի Կարին եւ օթեկանս կալան ի տան վերոյգրեալ Պողոսին, եւ փութայր երթալ յՕխտիկ առ բարեկամ քահանայն իւր. բայց լուեալ թէ նա յանկարգութիւն փոխեալ է, եթող զնա: Ապա լուաւ թէ առաջնորդ Կարմիր վամանսն, (որ հեռի էր ի քաղաքէն աւուր միոյ ճանապարհաւ) ընդ Յովհաննու: Իսկ զՅօհանն (այսինքն Հ. Մանուէլն) առաքեաց ի վանս Մուսուրկու, որ մերձ էր քաղաքին: Արդ առաջնորդ Կարմիր վանացն, որ էր վերոյգրեալ Մարզար եպիսկոպոսն, ունէր զերկուս կամ զերկուս արեղայս, եւ էին անդէն իրրեւ հնդեատասան պատանիք. զնոսա յանձնեաց Մխիթար արեղային: Եւ նա անդէն ի վանսն եւ²³ զգիրս հաւաքման Աստուածաշունչ զրոց եւ տանց ցուցանէ: Եւ զգիրքն Բիւրապար, որ զանուանաւ եւ զթիւս գլխոց եւ տանց ցուցանէ: Եւ զպատանիսն դաստիարակէր. եւ աշակերտի իւրում եւ արեղայիցն ամենեցուն դաս տայր զգիրս Ալպերտոսին²⁴. յետ սորա ի վերայ ցանկիցն Աստուածաշունչ զրոց զխորհրդական մեկնութիւնս՝ նկարագրականին համեմատեալ՝ ուսուցանէր նոցա: Ի նմին ժամանակի վերոյգրեալ Գրիգոր եպիսկոպոսն Մեղրեան էր ի վանսն: Յաւուր միում ի խօսիլն Մխիթարայ արեղային՝ ընդգէժ եկաց նմա եպիսկոպոսն այն. եւ եղեւ հակաճառութիւն մեծ. եւ վկայութեամբ զրոց ազգին մերոյ ափիբերան արար զեպիսկոպոսն. ընդ որ սրամտեալ նորա ցետեաց եղնօք զերեսս Մխիթարայ արեղային մինչեւ դալ արիւն, իսկ նա ոչ բարկացաւ. յայնժամ եւ նա եղեւ ուղղափառ: (Այս այն Գրիգոր եպիսկոպոսն է, որ յետոյ զնաց ի Հոռոմ, եւ անտի առաքեաց առ մեզ զմեծամեծ պատկերս Ծննդեան Աստուածածնին, զարրոյն Անտոնի արքային եւ զարրոյ Լուսաւորչին, զնկարեալսն ի Յովհաննու պատկերահանէն:)

1698. Յայնմ ամարայնի ժանտամահ եղեւ ի յայն վանսն եւ մեռան տմանք²⁵. յետոյ անկաւ անդ վատ ցաւ եւ ամենեքեան անկան ի մահիճս բաց ի Մխիթար արեղային, որ ամենեցուն սպասաւորէր: Յորժամ ամենեքեանքն աւուղջացան, յայնժամ եւ նա ըմբռնեցաւ. էառ արիւն ի ճակատէ իւրմէ, եւ

²² A մարզուանաւ:

²³ AB Հոս պակաս միւսնին իմացիր քանդէն ի վանսն արար զգիրս...: Ազոնց էջ 128.

«Անդ հաւաքեաց ի մի զիր զՎերոյգրեալսն՝ զոր հանեալ էր յաստուածաշունչ զրոց... արար եւ գիւրապարն»:

²⁴ Համաստուութիւն աստուածարանութեան երանելոյն մեծին Ալպերտի. որ ապա 1490 տեսաւ վեներտիկ 1715ին:

²⁵ A Հուրի ոմանք:

զոյգ ընդ նմին հոսէին արիւն եւ յրոնգացն, մինչեւ մերձ ի մահ, եւ ուր ուրեմն դադարեցաւ եւ ապա տգէտ ոմն²⁶ ետ նմա զընդ մաքրողական, յորմէ փոքր մի եւս մեռանէր. եւ տանուէրն (այսինքն Պողոսն) զարհուրեալ տարաւ զնա ի խանն, ուր Յովհաննէսն սպասաւորէր նմա: Եւ յետ աւուրց ինչ առողջացաւ եւ դարձաւ ի վանսն:

Իբրեւ եհաս ձմեռն, եկն ի նա հազ սաստիկ, մինչեւ հեղանիւթ կերակուր ուտէր. եւ զնաց ի տուն Պողոսին եւ բազում դեղովք կիսառողջացեալ դարձաւ ի վանսն: Իբրեւ եհաս ձմեռն (իբր 22 գրի տեղ դատարկ): Մարդար վարդապետն ետ նմա զծայրագոյն դաւազան վարդապետութեան 1699 ի 23երորդ ամի հասակի նորա: Ահա օրինակն վկայականին վարդապետութեան նորա.

(Տ. Կ.) (ՅԻ ՔԻ ԾՌՅ ՄԱՐԳԱՐԷ ՎԴՊ. ԹՎԻՆ ՌՃԻԹ.)²⁷.

ՅԻ ՔԻ նուաստ ծառայ Մարգարէ վարդապետ սպասաւոր եւ պաշտօնեայ Տեառնն բանի, եւ քարոզ Աւետարանի նորա, ըստ հրամանի Փրկչին Յիսուսի, զոր ետ սրբոց առաքելոց իւրոց, ասելով. Գնացէք աշակերտեցէք զամենայն հեթանոսս. եւ ուսուցէք նոցա պահել զամենայն, զոր ինչ պատուիրեցի ձեզ: Եւ առաքելքն զտեսալ հրամանսն ի Տեառնէ, աւանդեցին աշակերտաց իւրեանց եւ նոքա հետեւողաց իւրեանց, մինչ ի սուրբ Հայրապետսն. եւ ի նոցունց շառաւիղէ բողոքեցաւ բազմաչարչար եւ կենդանի նահատակն Քրիստոսի, սուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն. եւ նա ետ որդւոց իւրոց, սրբոյն Արիստակիսի, եւ սրբոյն Վրթանիսի. սասպէս միմեանց ընձեռելով ժամանեալ եհաս ի սուրբն Ներսէս. եւ նա փոխադրեաց ի մեծն եւ ի սուրբն Իսահակ. եւ նա ետ մեծին եւ սրբոյն Մեսրոպայ. եւ նա ետ սրբոց թարգմանչացն, Եղիշէի, Դաւթի եւ Մօսիսի եւ սոքա իւրոց աշակերտացն. մինչ որ եհաս ի Գոշ վարդապետն եւ Վանական, եւ Վարդան, եւ Ներսէս. եւ Եսայի. եւ Տիրատուր. եւ Մխիթար. եւ Յօհան Որոտնեցի. եւ Գրիգոր Տաթեւացի. եւ նորին աշակերտ Դանիէլ վարդապետն. եւ նորին աշակերտ Յովհաննէս Համչէնցին. եւ նորին աշակերտ Գրիգոր Չորթանն. եւ նորին աշակերտ Ներսէս Բաղիշեցին. եւ նորին աշակերտ Ներսէս Մատաղն. եւ նորին աշակերտ Ներսէս Ամկեցին. եւ նորին աշակերտ Յովհաննէս Բրկութն Ոստանցին. եւ նորին աշակերտ Բարսեղ Աղբակեցին. եւ նորին աշակերտ Յովհաննէս Բուժիկն. եւ նորին աշակերտն Սաչատուր վարդապետն Բաղիշեցին. եւ նորին աշակերտ Վարդան վարդապետն Բաղիշեցին. եւ նորին աշակերտ եւ Մարգարէ վարդապետ Թէոփոսոսեցի ի յեպիսկոպոսարանէ հրաշագեղոյ սրբոյ Աստուածածնին, Կարմիր եւ Ընծուց վանք կոչեցելոյ. որ եւ զնոյն հրաման եւ զիշխանութիւնն փրկչական, ետու աշակերտեցելոյն իմոյ, եւ հետեւողի Աւետարանի Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, Մխիթարայ Սերաստացոյն՝ քարոզելոյ եւ ուսուցանելոյ յալանջս հաւատացելոցն Քրիստոսի զսուրբ Աւետարանն Յիսուսի Քրիստոսի, ընդ ամենայն տեղիս, ուր եւ հասանիցի, ի քաղաք, ի գիւղ, եւ յամենայն շէնս

²⁶ A չունի տգէտ ոմն. դատարկ տեղ քողուցած:
²⁷ A ունի ՌՃԻԹ:

աներկեւանութեամբ եւ անստերիւր բանականութեամբ ըստ կանոնի սրբոյ Եկեղեցւոյ. եւ ուղղափառ Հարցն սրբոց դաւանութեան, ընթանալով ի շաւիղս Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի: Ընդունողք սորա օրհնեցեալք լիցին ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ եւ յամենայն սրբոց խանութիւն կապելոյ կամ բանադրելոյ զոք. այլ թէ իցէ ոք լուծող ասնորա. ամէն: Բայց սակս ժողովքի եւ ողորմութեան չտալոյ, չունի իշտուածային կանոնացն, եւ հակառակ գտանիցի ճշմարտութեան սրբոյ Աւետարանին Քրիստոսի, ունի ի վերայ այնոցիկ իշխանութիւն սաստելոյ եւ յանդիմանելոյ առ ի բերել ի զղջումն եւ յուղղութիւն. զի լուիցէ ի տարիմ, մո'ւտ յուրախութիւն Տեառն քոյ. զի որով ի սակաւուտ հաւաքիստոսէ Աստուծոյ մերմէ որ ասէ. թէ Ազնիւ ծառայ, բարի եւ հաւատարիմ, մո'ւտ յուրախութիւն Տեառն քոյ. զի որով ի սակաւուտ հաւաքիստոսէ եղեր, ի վերայ բազմաց կացուցից զքեզ: Ընդունողք սորա եւ մեծարողք, օրհնեցեալք լիցին ի Քրիստոսէ, որ է օրհնեալ անդրաւ յաւիտեանս. ամէն:

Գրեցաւ ի թուին Հայոց ՌՃԽԸ: (Տ. Կ.) ՄՐԳՐԷ ՎԴՊ:

Առին եւ այլ երկու արեղայք զգաւազան ընդ Մխիթարայ վարդապետին մեծաւ հանդիսութեամբ: Եւ Մխիթար վարդապետն ետ գառաջին քարոզն: Եւ եպիսկոպոսն առաքեաց զնա ի քարոզութիւն ի թեմի իւրում: Ունէր Մխիթար վարդապետն ընդ իւր զՅովհաննէս աշակերտ իւր, զոր ընդ այն ժամանակս քահանայ ձեռնադրեալ էր Մարգար եպիսկոպոսն: Յետ այսորիկ Մխիթար վարդապետն յայտնեաց Մարգար վարդապետին զխորհուրդս իւր եւ յորդորէր զնա ի յայն, զոր օրինակ զնաչատուր վարդապետն. բայց նա վասն մարմնական երկիւղի ի բաց եկաց:

Ապա խորհեցաւ ելանել ի վանից անտի եւ գնալ ի քաղաք եւ դառնալ անդրէն ի Կոստանդնուպոլիս իւրայնովքն հանդերձ: Որպէս զի անդ, որչափ ինչ գտցէ ձեռն իւր ողորմութեամբ աստուածասէր անձանց, տացէ ի տպագրութիւն գհոգեւոր գրեանս: Եւ յանջոյթ կողման ուրեք գտուն վարձեալ, անդ ժողովեացէ եւ ուսուցէ զաշակերտսն: Եւ ի վարժելն իւրում զիցէ զնոսա երբեմն ի դործս գրակագմութեան, որպէս զի որք ի տեսութիւն նոցա եկեղեցին, ի յայն դործ զնոսա գացեն, եւ զժողովումն նոցա առ այս վախճան վարկանելով, բան նախանձու եւ հակառակութեանց ուսուցէ զնոսա եւ կրթեցէ ի ինքն առանց յարուցման հակառակութեանց ուսուցէ վարդապետութիւն եւ այնպէս առաւ կրօնաւորական վարս եւ զարգացուցէ ի վարդապետութիւն եւ այնպէս քարոզէ զնոսա ի քարոզութիւն ուղղափառ հաւատոյ յազգս մեր: Չայս խորհուրդ ի մտի եղեալ հանդերձէր ելանել անտի: Յայնժամ կոչեաց զՅօհանն (այսինքն Հ. Մանուէլն) ի Մուսուրկու²⁸ վանացն եւ զմիտս գնալոյն ի Կոստանդնուպոլիս ծանոյց նմա: Եւ առաքեաց զնա յառաջագոյն քան զինքն երթալ անդ: Եւ ընտրեաց ի մանկանց վանացն զմանուկ մի (այն է Կարնեցի Հ. Գարրիէլն առաջին) եւ խրատեալ զնա առաքեաց ի տուն ծնողաց իւրոց եւ յետոյ յորժամ հանդերձէր ելանել ի ձանապարհ առաքեաց կոչեաց զնա անտի առ իւր: Այլ եւ Ղազար անուն պատանի մի խնդրեաց զհետ երթալ ի սպասաւորութիւն նոցա. եւ նա այնպէս ընդունելի եղեւ: Եւ ելեալ Մխիթար

²⁸ B Մուսուրկու:

Քահանայ ոմն յԵւզոկիա Տէր Յարութիւն, յարուցեալ եւ յստն կացեալ՝ հոլանի գլխով ընթեռնոյր զողջունագիրսն նորա: Այլ ոմն Երկիւղած զամս իրրեւ երեսուն, զմին յոյսպիսի գրոց նորա իրրեւ զնշխարս սրբոց ի վերայ իւր ջերմեռանդն հաւատով միշտ պահէր:

Յամի Տեառն 1701, Երկրորդ³⁷ ամ Միաբանութեանն, ի քսաներորդ վեցերորդ ամի հասակի իւրոյ, յամսեանն ապրիլի, այն ինչ յանկ ելանել մերձենայր գրոցն տպագրութիւն, եւ ի վարձու կալաւ զտուն մի մեծ ի թաղն, որ վերջին մասն է Պերայ Կոստանդնուպոլսոյ, այսինքն Ուալթիայու ի Պէյոզլուն, ուր պատրաստեաց զգործիս կազմարարութեան գրոց: Ապա զմիաբանեալսն իւր ի տուն անդր հաւաքեաց եւ սկսաւ զնոսա ուսուցանել ըստ որում իւրաքանչիւր ումեք պիտոյ էր. եւ ստէպ խրատս տայր նոցա յաղագս հնագնդութեան, եւ որք ըստ այսմ ըստ կարգի հարկաւոր են առ կրօնաւորական կացս: Եւ յայնմ հետէ զօր ամենայն ընդ նոսա էր ի տան անդ, եւ միայն յաւուրս կերակէից զնայր յեկեղեցին սրբոյ Լուսաւորչին ի քարոզել:

Ի մայիսի մէկն Մեղքիսէթ պատրիարզն Կոստանդնուպոլսոյ գրեաց զնամակն եւ ետ Մխիթարայ վարդապետին, յորում տայր նմա հրաման քարոզելոյ ընդ ամենայն Երկիր: Եւ ի յանցանել աւուրց ամսոյ միոյ յարեաւ ընդդէմ ուղղափառաց հալածումն մեծ (այս է առաջին հալածումն մեծ ի յԵփրեմ պատրիարգէն Կոստանդնուպոլսոյ՝ եկեալ յԱնդրիանուպոլսոյ):

Աստէն ի դէպ համարիմ գրել զհամառօտ ձեռագիր գրուածն Ուաչատուր վարդապետին էրզրումեցոյ՝ Առաքելական քարոզչի: Եւ գրէ ըստ նոր տօմարին.

Թուին Քրիստոսի 1701, Յուլիսի 15³⁸, յաւուր ուրբաթի եւ Ուաչատուր վարդապետս մտի ի վանս Քափուչինաց:

Յուլիսի 17, կիրակի, հասին ի Կոստանդնուպոլսի եւ մտին ի Թէրսխանան Տէր Գրիգորն, Տէր Յովսէփն եւ Տէր Սարգիսն:

Յուլիսի 18, երկուշաբթի, ընկալայ զգիր ի Պատրիարգէն եւ Ուաչատուր վարդապետս, յորում գրեալ էր, թէ եւ Փէրման ընդդէմ երիցս, այսինքն Ուաչատուր վարդապետիս, Սարգիս եպիսկոպոսին եւ Մխիթար վարդապետին. ի նմին աւուր Գրիգորն փախստական եկն ի յԱնդրիանուպոլսոյ:

Յուլիսի 19, երեքշաբթի, Մխիթար վարդապետն փախեաւ ի վանս Յիսուսականաց: (Բայց ի վարս Արքայոր մերոյ ոչ գրի այսօր փախչիլ ամա ի վանս Յիսուսականաց. բայց ոչ է զարմանք, զի Ուաչատուր վարդապետն փախստական եւ առանձնացեալ՝ լսելով միայն գրեաց զայս):

Յուլիսի 22, ուրբաթ, եկն եհաս Փերման:

Յուլիսի 23, շաբաթ, Մխիթար վարդապետն, Տէր Հ. Մանուէն եւ Եղբայր Անտոնն մտին փախստականք ի վանս Քափուչինաց: Ի նմին աւուր թշնամիք խնդրեցին զՍարգիս եպիսկոպոսն, բայց ողորմութեամբն Աստուծոյ չկարացին գտանել, թէպէտ կոխեցին զտունն Թէրճիման Սարգսին:

Յուլիսի 26, երեքշաբթի, ի մէջ գիշերի լոյս ի չորեքշաբթի ի Պէկոզլուն թշնամիք կոխեցին զթէրզի Գրիգորի աներոջն տունն, զչորս անձինս կալեալք կապանօք, զորս տարեալք եղին ի բանտի վանս մեր երիցս

³⁷ A չունի երկրորդ:
³⁸ Ամսաթուեքը նոր Տօմարով են:

վարդապետացս, եւ վանս տիրացու Գէորգին՝ զՈւաչատուր վարդապետն պահողին:

Յուլիսի 27, չորեքշաբթի, ի ժամ երեկոյի կոխեցին զվանս Յիսուսականաց եւ կալան գրիգոր սարկաւաղն, բայց յանձնեցին թէրճիմանին, որ տարաւ զնա ի պալատն Էլչի պէկին, ուր յայնմ գիշերի օթեվանեցաւ:

Յուլիսի 28, հինգշաբթի, ի յառաւօտն տիրացու Գէորգն եկն ի վանս Քափուչինաց փախստական. ի նմին աւուր զտիրացու Գրիգորն տարան առ փաշան, եւ ազատեցան Պէյոզլցիկ³⁹:

Յուլիսի 29, ուրբաթ, կոխեցին ըզՅալըն եւ կալան վանս մեր գերիս Հարս կրօնաւորս ցբուլանդս ծուլուլանդս կարծեալք, թէ մեք էաք փոխեալք զկերպարանս մեր. սակայն տեղեկացեալք իրին՝ արձակեցին զնոսա: Ի նմին աւուր լուաք թէ ի յԱնդրիանուպոլսի թշնամիք չթաղին եւ կատարեն զկամս նոցա, որք դաւանին զմի բնութիւն եւ նդովեն զԷջն եւ ասեն. Անհաւատք էաք, այժմ հաւատացեալք եղաք⁴⁰:

Օգոստոսի 1, երկուշաբթի, ըմբռնեցին զստաֆ Սահակն, որոնցին զտիրացու Նորատունկն եւ զեղբայր Մուրատն եւ ոչ գտին. եւ բազումք գերեսս իւրեանց պահեցին: Ի նմին աւուր լուաք թէ հակառակք վանս եօթն վարդապետաց առեալք են արգ եւ թէ պատրիարզն ասացեալ է. Ես ոչ պատրիարգութիւն կ'ուզեմ, ոչ զճմարտութիւն կ'ուրանամ. կ'ուզեք զիս քշել տուէք, կ'ուզեք զիմ մանտուպն առէք:

Օգոստոսի 2, երեքշաբթի, եղբայր Պետրոսն եւ եղբայր Մկրտիչն եկին փախստականք ի վանս Քափուչինաց: Ի նմին աւուր ստաֆ Սահակն ազատեցաւ:

Օգոստոսի 4, հինգշաբթի, Գրիգորն ազատեցաւ:
Օգոստոսի 5, ուրբաթ. Նորատունկ Զէլէպին փախեաւ ի վանս փուչինաց:

Օգոստոսի 8, երեքշաբթի⁴¹. Եղիա վարդապետն փախեաւ ի վանս Քափուչինաց:

Օգոստոսի 12, ուրբաթ⁴². Գէորգ տիրացուն եւ ի վանաց եւ զնաց շրջիլ համարձակարար: Ի նմին աւուր լուաք թէ ի յէտրէնէ Սուրբի պատրիարգն եղեալ է ի բանտի Զաւուշ պաշուն:

Օգոստոսի 20, շաբաթ. լուաք թէ Ղայմախանն կոչեցեալ է զՀայս եւ պատուիրեալ է նոցա, զի առնիցեն զխաղաղութիւն եւ բառնայցեն զխոթութեան. քարոզիցեն վարդապետք զրանս խաղաղութեան նոցա եւ սպառնացեալ է նոցա, մանաւանդ սահապայար Երեմիային եւ Մուսիկին, զի մի առնուցուն յումեքէ զԵրամ մի կամ տայցեն ումեք: Խնդրեալ է ի նոցանէ զկնիքս բազմաց, զի առաքեսցէ արգ ի յԱնդրիանուպոլսի:

Օգոստոսի 23, երեքշաբթի. Պատրիարզն հասաւ ի Կոստանդնուպոլս եւ առաքեցաւ ի թէրսխանան: Ի նմին աւուր զոմն ուղղափառ ի բանտ արկին, զի չհայհոյեաց:

³⁹ Այսպէ՛ս AB:
⁴⁰ A էաք:
⁴¹ Իմացիր «Երկուշաբթի»:
⁴² A չունի ուրբաթ:

Օգոստոսի 24, չորեքշաբաթի. զպապա Այսինն եւ զՄխլայիմ օղլու Յովհաննէսն արկին ի բանս վասն ճշմարտութեան:

Օգոստոսի 25, հինգշաբաթի. ըմբռնեցին զՆորատունկ չէլչպին, զսա- աֆ Ալեքսանն եւ զԽօծայ Մուրատն: Նորատունկ չէլչպին զարնել ետուն ի նստել տեղն զեօթանասուն եւ ութ գանս: Ալեքսանն ազատեցաւ, եր- կուքն մնացին ի բանսի:

Օգոստոսի 27, շաբաթ. առաքեցին ի թէրսխանան զհինգ անձինս, այսինքն զՆորատունկ չէլչպին, զԽօծայ Մուրատն, զպապայ Այսինն, զՄխլայիմ օղլու Յովհաննէսն եւ զՍամաթիացին: Ի նմին աւուր յերե- կոյեան ժամուն Կեսարացիք ի յեկեղեցոջ Աստուածածնի կատաղեցան ընդդէմ Մինաս հայրապետին սուրբ Երուսաղէմի առաջնորդի, մինչ յոր- դորէր զնոսա առ խաղաղութիւն եւ առ հաշտութիւն:

Օգոստոսի 30, երեքշաբաթի. եղև հրդեհումն մեծ ի Կոստանդնու- պոլիս:

Սեպտեմբերի 2, ուրբաթ. ի գիշերի եղև հրդեհումն մեծ ի Կոս- տանդնուպոլիս, արտաքոյ պարսպի մերձ առ Պալատ, ուր բնակին Հրեայք:

Սեպտեմբերի 4, կիրակի. երկու թշնամիք, այսինքն Աճամն եւ Մուսիկն զմիմեանս ըմբռնել ետուն:

Սեպտեմբերի 9, ուրբաթ⁴³. լուաք թէ ի յետրէնէ եղևալ էր մեծ հրդեհումն, այնպէս թէ եկեղեցին Հայոց եւ հինգ եկեղեցիք Յունաց այրեցան: Ի նմին աւուր Նորատունկ չէլչպին ազատեցաւ:

Մինչև ցաստ են բանք Խաչատուր վարդապետին:

ՄԵԿՆՈՒՄՆ Ի ՄՈՌԱ

Արդ՝ Մխիթար վարդապետն փախուցեալ ի հալածանաց անտի զնաց թաղեաւ յապարանս զեսպանին Գաղղիոյ ի յուլիսի 23, շաբաթ, ըստ նոր տուժարին, ըստ գրելոյ Խաչատուր վարդապետին. եւ եկաց ի սենեկի միում ի վանս Գափուշինաց կարգին: Եւ ապա յետս կոչեաց զորս ի քարոզութիւն առաքեալ էր, եւ եկին: Եւ զի բազումք կամէին նմա աշակերտել, խորհեցաւ ի յապաճով երկիր երթալ: Վասն որոյ ի սեպտեմբերի 8, զամենայն աշա- կերտեալ միարանսն առ իւր կոչեալ անդէն ժողովէր, խորհել նոքօք հան- դերձ թէ յոր կողմն աշխարհիս մարթ իցէ երթալ եւ կալ յապաճով տեղոջ: Ապա ի խորհրդեանն յայնմիկ յետ բազում քննութեանց լինելոյ ընտրէր եւ հաստատէր յերկիր ինչ քրիստոնէից ժողովել: Եւ ընտրեցաւ ի Պելլոպոն- տիա, որ է Մուս, ժողովել եւ անդ զբնակութիւն ունել: Ապա առ հասարակ միարանութիւն ժողովոյն ջերմ սիրով եւ հաստատուն սիրով զինքն բոլորո- վին երանուհւոյ Կուսին Մարիամու յորդեգրութիւն նուիրեաց: Եւ անտի եղև Միարանութեան մերում շնորհօքն սրբոյ Կուսին կրել զմակաղիր եւ զկնիք, որ զայս ձեւ նշանագրութեան ունի. Ո. Կ. Վ. Ա. այսինքն է. Որդեգիր Կու- սին. Վարդապետ Ապաշխարութեան: Եւ հաստատութեան խորհուրդս եւ նուիրումն յորդեգրութիւն երանուհւոյ Կուսին եղև յամի Տեառն 1701, ի սեպտեմբերի 8: Եւ ամենայն միարանեալքն ընդ Մխիթար վարդապետին թուեալ՝ էին անձինք տասն: Յորս յետ Մխիթարայ վարդապետին. Հ. Եղիա

⁴³ A չուցի ուրբաթ:

վարդապետն, Հ. Յովհաննէս վարդապետն, Հ. Գէորգ վարդապետն, Հ. Մա- նուէլն, Եղ. Ղազարն Ակնեցի, Եղ. Յովհաննէսն ի Սերաստիոյ, Եղ. Ազա- րիայն ի Պերայ Կոստանդնուպոլոյ (այսինքն Խալաթայի), Եղ. Գարբէլէն ի Կարնոյ եւ Եղ. Միքայէլն ի Սերաստիոյ: Յետ ոչ բազում աւուրց առաքեաց զաշակերտս իւր ի Պելլոպոնտիա մի զհետ միոյ, միմեանց զկնի: Յետ խոր- հրդոյն հաստատելոյ առաքեաց զՀ. Գէորգ վարդապետն ի Պելլոպոնտիա եւ զՅարութիւն պատանին ընդ նմա:

Յամի Տեառն 1702, ամ Միարանութեան 3: Ելեալ ի վանաց Գափուշի- նաց ընդ երկս՝ զնաց բնակեցաւ ի տան անն միոյ քրիստոնէի, որ էր զինն- վաճառ: Եւ եկաց անդէն վարձու իւրով աւուրս ինչ. եւ ուր ուրեմն գնաց բնակեցաւ ի տանիս, այսինքն յառաստաղի տան միոյ ուղղափառի յազգէս Հայոց. եւ եկաց անդէն աւուրս հնգետասան ընդ ոմանց աշակերտաց իւրոց ի յանձկադոյն յարկի անդ բազում նեղութեամբ: Եւ ապա գնաց ի Զմիւռ- նիա, այսինքն յիգմիր, ընդ նմա Հ. Մանուէլն իբրև ընկեր վաճառական, Միքայէլ պատանին իբրև սենեկապետ, այլ Յովհաննէս Եղիկիացին (որ սարկաւազն էր եւ աշխատաւոր եղբայր) խոհակեր եւ տնտեսիչ կերակրոյ եղև: Իսկ զԱզարիայն ոչ առաքեաց, այլ անդէն ի Կոստանդնուպոլիս եթող վասն բազում անհնազանդութեանն, սակայն յետոյ ապաշաւեալ՝ զարձաւ եւ ընկալեալ եղև, որպէս ստորև գրեսցուք:

Եւ եկաց յիգմիր ի պանդոկի միում եւ ապա յերեսաց հալածանաց փա- խեաւ եւ թաղեաւ ի վանս Յիսուսականաց աւուրս ինչ: Եւ ապա ի հոկ- տեմբերի եմուտ ի նաւ երթալ ի Զանթա: Եւ զկնի եօթնետասան աւուրց եհաս ի Զակիւնթոս, այն է Զանթա եւ վասն բազում ախկոծութեանն շարա- գրեաց ի նաւի անդ զերկն զայն. «Ընտրեալ ի մէջ հողեղինաց» եւ այլն: Եւ զկնի քառասնօրեայ նազարէթին զգուշութեան՝ վարձեաց զտուն ինչ եւ անդ եկաց: Իսկ աշակերտքն նորա որք յառաջագոյն առաքեցան ի Պելլոպոնտիա եւ հասեալ ի Նէապոլիս, կացին անդ եւ մնային գալստեան նորա: Եւ ապա ինքն եւս իւրայնովքն հանդերձ մտեալ ի նաւ էանց ի Նէապոլիս եւ էր անդէն մետա- Տեառն 1703 ի փետրուարի եհաս ի Նէապոլիս Կորնթոսի եւ էր անդէն մետա- սանիւքն հանդերձ ի տան ուրումն⁴⁴ վաճառականի Երեւանցոյ Յօհան անուամբ (որ էր հայրն Հ. Գրիգորին մերոյ Գանաքեոցոյ): Վասն զի ի ժամանակի յայտմիկ ամենայն անձինք, որք ի Պելլոպոնտիա ժողովեցան, հանդերձ գե- ղայարդոյ Մխիթար վարդապետին, էին իբրև միարանիցն, այսինքն զերայար- քին, այլ երկուտասանքն միայն էին⁴⁵ ի թուոյ միարանիցն, Հ. Եղիա դոյ Մխիթար վարդապետն, որ առաջնորդն էր Միարանութեան, Ղազար վարդապետն, Հ. Յովհաննէս վարդապետն, Հ. Գէորգ վարդապետն, Ղազար Ակնեցին, Հ. Մանուէլն, Պետրոսն եւ Պօղոսն, Յովհաննէս Սերաստացին, Գարբէլէն, Միքայէլն, Յովհաննէս սարկաւազն, որ տիրացու անուանիւր. Իսկ այլքն ոչ էին ի թուոյ միարանիցն, թէպէտ եւ ըզձանային լինել, որպիսի էր Յարութիւն պատանին, Անտոնն եւ Մարտիրոս անուամբ պատանի ոմն Եւզոկիացի: Այլ եւ Յովնան եպիսկոպոսն, որ զբնակութիւն միայն ունէր ընդ նոսա:

⁴⁴ A չուցի ուրումն:
⁴⁵ A չուցի էին:

Հաւանութեամբ առաջակայիցն իւրոց ընտրեաց Մխիթար վարդապետն զմենաստան Մխարանութեան մերոյ ի Մեթոն կառուցանել եւ ի պէտս ապրելոյ՝ զեկամուտս ընդունիլ: Ապա մուրհակօք աղաչանաց առ իշխանսն մտին: Եւ նոքա շնորհեցին Մխարանութեան մերում գտեղի ի Մեթոն քաղաքի, շինել զմենաստան եւ զեկեղեցի. այլ եւ զամբողջ գիւղ մի Գալազոն անուանեալ ի նահանգին Արդատիոյ եւ զմասն ինչ ի Մակրէմազ գեղջէ միոյ մեծէ՝ ի պարէնս: Յամսեանն ապրիլի Մխարանութիւնն մեր դեռ ի Նէպոլիս Կորնթոսի էր (որ է Նաւպլիս) եւ ի սոյն ամսեանն եկն պատանի ոմն անուն Յովհաննէս Բուզայեան (այն է Հ. Յակոբն Բուզայեան) եւ զիտէր յունարէն. եւ թիւ միաբանիցն եղեւ երեքտասան: Եւ Մխիթար վարդապետն ուսաւ յունարէն եւ մանաւանդ իտալերէն: Զայսու ժամանակաւ եկն զարձեալ Ազարիայն եւ թիւ միաբանիցն եղեւ չորեքտասան: Եւ յետ ոչ բազում աւուրց ընդունելոյ յիշխանաց անտի զգիրս եկամտիցն եւ գտեղոյ մենաստանին, ել Մխիթար վարդապետն ի Նէպոլիս⁴⁶ մխարանօքն հանդերձ եւ եկն եհաս ի յամբակառոյց գղեակն Մեթոն եւ անդէն կալան զընակութիւն ի տան միում (զոր շնորհեաց նոցա իշխանն էյրէթի). եւ որոշեցին զգիրսն եւ զանդաստանսն պարգեւեալս, եւ կալան զժառանգութիւն նոցա: Իսկ ի տանն յայնմիկ բնակէին ըստ կարգի իրբեւ ի մենաստանի: Ապա Մխիթար վարդապետն որոշեաց զնոսա, որք չէին ի թուոյ միաբանից իւրոց, ի նոցանէ զորս ի թիւս միաբանից իւրոց գրեալ էր. քանզի զԱնտոնն եւ զՅարութիւնն յետս առաքեաց: Յայնժամ զմասնս ի նոցանէ, որք ի վաղ ժամանակաց հետէ աշակերտեալքն էին, եւ էին քահանայք, ետ անել զերիս ուխտս կրօնին առաջի իւր եւ առաջի ամենայն միաբանիցն: Եւ սոքա էին. Հ. Եղիա վարդապետն, Հ. Յովհաննէս վարդապետն, Հ. Գէորգ վարդապետն եւ Հ. Մանուէլն: Իսկ զայլս որք նորոգ աշակերտեալքն էին եւ կամ դեռ եւս պատանիք՝ ի նորընծայութեան դնէր: Արար եւ զայլ որոշումն, զի զվարդապետն եւ զայլս ի միաբանից անտի, որ հասակաւ առոյգ էին, ի վերայ զործոց եւ պիտոյից Մխարանութեանն կացուցանէր: Իսկ զպատանիսն ի յուսումն քերականութեան դնէր. եւ էին սոքա, զորս ի յուսումն եղ. Եղ. Պողոսն, Եղ. Պետրոսն, Եղ. Յովհաննէսն (այս է Հ. Թովմաս⁴⁷), Եղ. Գարրիէլն, Եղ. Միքայէլն եւ Եղ. Յակոբն: Եւ էր ինքն նոցա զաստու ուսման եւ ուսուցիչ հոգեւոր վարուց: Եկն յայնժամ եւ Գրիգոր պատանին, որդի վերոյգրեալ Յովհաննու վաճառականին Երեւանցոյ եւ եղաւ ընդ վեցսն ի նորընծայութեան եւ ի յուսումն քերականութեան. եւ թիւ միաբանից եղեւ հնգետասան: Եւ կային ի տան անդ իրբեւ ի մենաստանի կանոնօք եւ կարգօք: Եւ խորհէր զչորրորդ ուխտ ի վերայ երկն ուխտից կրօնին յաւելուլ: Եւ ամենայն միաբանքն, որք յայտմ ամի գտան, սոքա էին յանուանէ:

Յամի Տեառն 1704, ամ Մխարանութեան 5. Կրեաց Մխիթար վարդապետն զնեղութիւն յապտամբութենէ Հ. Գէորգ վարդապետին: Ետ ուխտել Եղ. Ղազարին, Եղ. Յովհաննէսին աշխատաւորին, Եղ. Յովհաննէսին որ կուչեցաւ Թովմաս, Եղ. Ազարիային, Եղ. Պողոսին, Եղ. Պետրոսին, Եղ. Գարրիէլին, Եղ. Միքայէլին, Եղ. Յակոբին, եւ Եղ. Գրիգորին: Ետ ձեռնադրել

⁴⁶ A Նէպոլիս:
⁴⁷ A չունի այս է Հ. Թովմաս:

քահանայ զՀ. Ղազարն, զՀ. Թովմասն: Իսկ կիսասարկաւագ Եղ. Պողոսն, Պետրոսն, Գարրիէլն, Միքայէլն: Եւ ձեռնադրեցան յեկեղեցուջ Լատինացոց ի Յովման⁴⁸ եպիսկոպոսէն: Ի յուլիսի 23 եհաս ի վերայ Մխիթարայ վարդապետին մահաբեր հիւանդութիւն ինչ սաստիկ ջերման, որ անուանեալ կուչի շար ջերմնն, եւ էր շարունակ: Եւ զկնի չորեքտասան աւուրց հիւանդութիւն նորա մեղմացաւ, եւ ոչ յայնժամ, այլ երբեմն ունէր զնա ջերմն: Եւ ըստ հրամանի բժշկին գնաց ի գիւղ ուրեմն, եւ եկաց անդ աւուրս երկուց շաբաթուց. սակայն մինչեւ ի կատարումն ամի միոյ ոչ լիապէս առողջացաւ: Բայց տայր զգրան եւ զայլ դորձան անէր:

1705, ամ Մխարանութեան 6: Ետ ձեռնադրել քահանայս զՀ. Պողոսն, զՀ. Պետրոսն, զԵղ. Ազարիայն, որ յայնժամ կուչեցաւ Հ. Անդրէաս. եւ կիսասարկաւագուեսն՝ զԵղ. Յակոբն, Գրիգորն, Յովսէփն ի Յովման եպիսկոպոսէն ի Լատինացոցն եկեղեցուջ:

Ի վեարուարի Հ. Անդրէասն արտաքսեցաւ: Սոյնպէս եւ Սրապիոն աշխատաւոր եղբայրն ուխտադրութեալ եղեալ գնաց յաշխարհ:

Նորհեցաւ Մխիթար վարդապետն ի սրտի իւրում եւ ասէ. զՄխարանութիւնն զոր շնորհօք Տեառն յողեալ հաստատեցաք, որպէս զի հողեւոր մշակք հանցին ի ամանէ եւ զչորրորդ ուխտն ի վերայ երկնսն առ այս վախճան յաւելաք, պարտ է մեզ եւ հարկ իսկ է զայս փոխանորդին Գրիստոսի ցուցանել եւ զհաստատութիւն ընդունիլ: Ապա ընդ առաջակայիցն իւրոց խորհուրդ արարեալ⁴⁹ առաքել զՀ. Եղիա վարդապետն կարգի մերոյ եւ զվկայականն եւ զձեւ եւ զամենայն ինչ զմիայնակեցութեան կարգի մերոյ եւ զվկայականն Արհիեպիսկոպոսին Կորնթոսի եւ եպիսկոպոսին Զակիւնթոսի եւ մեծամեծաց Եւս նոցա եւ առաքեաց ի Հոովմ. եւ էր յայնժամ ծայրագոյն Գահանայապետ՝ Տէր Կղեմէս ԺԱ.: Եւ դեսպանն վեներաբլոյ որ ի Հոովմ ընդ իւր առեալ գնուսա՝ ինքնին եմոյժ գնոսա առ սուրբ Հայրապետն: Զկնի վեց ամսոց դարձաւ Հ. Եղիա վարդապետն, իսկ Հ. Յովհաննէս վարդապետն մնաց անդ եւ ուսալ ի Լատինական եւ յիտալական բարբառ:

1706 ա. մ. 7. ի մարտի. ի դղեկին Մեթոն հիմն արկաւ շինուածոյն առաջին վանիցն, բայց ինքն ճարտարապետ էր. եւ ի հոկտեմբերի կատարեցաւ շինուածն, այսինքն մի կողմն մենաստանին, եօթնուտասն սենեկօք: Ի յունիսի վախճանեցաւ Եղ. Ստեփանն նորընծայն. ուխտեաց Եղ. Փիլիպպոսն: Իրր ի վերջումն յայտմ ամի Մխիթար վարդապետն զընակութիւն⁵⁰ Մխարանութեան մերոյ փոխեաց յիջևիւանէ անտի, ուր մինչեւ ցայժմ լինէր, ի նորաչէն մենաստան անդր: Եկն եհաս ի Հոովմայ Հ. Եղիա վարդապետն:

1707 ա. մ. 8. Մխիթար վարդապետն գնաց ի Նէպոլիս, եւ գնեաց ապայ եւ մուրաց յիմօ իշխանէն զցորեան եւ զպաքսիմատ եւ զարձաւ: Աշխատաւոր Եղ. Մարկոսն ուխտեաց: Զկարգեալսն ի յուսումն մակացութեանց յերկուս դասս որոշեալ էր. յառաջին դասի էին Հ. Պողոսն, Հ. Պետրոսն, Հ. Թովմասն, Եղ. Գարրիէլն, Եղ. Միքայէլն, Յակոբն, Գրիգորն, Յովսէփն եւ Եղ. Փիլիպպոսն. սոքա մերձ էին ընդ հուպ եւ զհոկտորութիւնն բովանդակել: Իսկ յերկրորդ դասի էին երկու նորամուտ նորընծայք մանկապոյնք,

⁴⁸ A Յովման:
⁴⁹ A առեալ:
⁵⁰ A ամի մխարանակութիւն մ. 1

այսինքն Ստեփանն եւ Մատթէոսն. եւ ուսումն սոցա էր քերթողութիւնն. եւ երկոցուն խմբիցն զդասն տայր Մխիթար վարդապետն:

1707, ի հոկտեմբերի 25, յաւուր շարաթու, ի տօնի սրբոց մարտիրոսացն Դեմետրեայ վկային եւ Բասիլիսկոսի քահանային, նահատակեցաւ Տէր Կոմիտաս քահանայն, որ էր ի Հայոց ազգէն, որդի Տէր Մարտիրոս քահանայի, ի Կոստանդնուպոլիս քաղաքի, եւ անուն մօր նորա Յուզիտա: Էր յայնժամ պատրիարք ի Կոստանդնուպոլիս՝ վարդապետ ոմն Յովհաննէս անուն ի Զմիւռնիոյ (թուի լինել երկրորդ հայածումն):

1708 ա. մ. 9. ի սրբազան զղեստուց նորա փիլոնն եւ այլ մասն հանդերձից նորա եկն առ մեզ, զորս ընդ երկուց ձեռագրաց նորա առ մեզ պատուով պահեմք. յորս են Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն եւ Գիրք սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյն:

Ի մարտի արկաւ հիմն եկեղեցւոյն սրբոյն Անտոնի որ ի Մեթոն եւ կատարեցան որմունք նորա ի հոկտեմբերի: Ուխտեցին Եղ. Ստեփանն եւ Եղ. Մատթէոսն ի վանքն, ի մատուանն:

1709 ա. մ. 10. Վասն աղքատութեան միայն ըստ երիւր մասին եղև ձեզունարկութիւնն եկեղեցւոյն, ուր աւագ խորանն է, եւ առ որմով կանդնեցաւ սեղան անժամանակեայ վեր ի վերոյ. եւ այնպէս յամս ինչ ընդ այսպիսի եւ ընդ այնչափ ծածկեալ յարկաւ զաստուածային պաշտամունսն կատարել բաւականացան. եւ զի ի սկզբանէ մինչև ցարդ զժամատեղի ոչ ունելով, զխուց մի պատշաճաւոր աղօթարան արարեալ, անդ կատարէին զաստուածային ժամակարգութիւնն: Իսկ զպատարազն՝ յեկեղեցիս Լատինացւոց մատուցանէին: Աշխատաւոր Եղ. Մկրտիչն՝ ուխտեաց ի մատուանն: Մխիթար վարդապետն վերստին կարգեալ գրեաց զվերոյդրեալ գրուածն եւ առաքեաց առ սուրբ Գահն Հոովմայ: Դարձեալ վերստին զնոյնն գրեաց ըստ խնդրոյ նոցա:

Խորհեցաւ ընդ առաջակայիցն իւրոց եւ հաւանութեամբ միարան ժողովոյն զսրբոյն Բենեդիկտոսի կանոնն ընտրեաց եւ այնպէս պատասխանի արար սուրբ Աթոռոյն:

Զբազում ամբաստանութիւնս զրպարտութեամբ կրեաց ի Հայոց որք ի Հոովմ:

Որք ի վերագոյն դասի էին, զՏրամարանութիւնն աւարտեալ՝ սկսան զինարանութիւնն: Իսկ ի ստորին դասի եղեալքն, այսինքն Ստեփանն եւ Մատթէոսն ընդ ստորի դասն համառօտիւք անցեալ, ժամանեցին դասակից լինել նոցա, որք ի փիլիսոփայական մակացութիւնսն վարժէին. եւ յայնժամ Մխիթար վարդապետն ի վերագոյն դասի եղելոց զերիսն, որք հասակաւ մերձ փոքրագունիցն էին, յերիցագունիցն մեկնեալ՝ ընդ փոքրագունիցն ի մի դաս կարգեաց. եւ այսպէս յառաջ ընթացան երկոքին դասք:

1711 ա. մ. 12. Յառանձին ինքեամբ ջնջեաց զանուն Հ. Գէորգին, զոր նա յեփեսոս քաղաքի ի տեսլեան զիշերոյ յերազի տեսանէր: Զնոյն տեսանէր անդէն եւ ոմն ի բարեկամաց մերոց Յովհաննէս անուն (եւ յետ ամաց ինչ ետես Հ. Գէորգն զերազն. ջաղխեցէ՛ք զզազանդ):

Կատարեցաւ շինուած եկեղեցւոյն եւ սեղանատան, եւ խոհակերոց մեծնաստանին կերտեաց: Եւ ի գեօղան, որք եկամուտք մենարանի մերոյ էին, յաւել ձեռաստունկս եւ այնպէս զայդիս եւ զձիթենիս բազմացոյց:

Յայսմ ամի եղև վասն կարգի թափօրին հնարքն Մխիթարայ վարդապետին:

1712. 13. Եկն եհաս Հ. Յովհաննէս վարդապետն ի Հոովմայ եւ երբ զԳիրս սահմանադրութեանն: Ի սեպտեմբերի զնաց Մխիթար վարդապետն ի Նէպոլիս եւ անդ առաջի Արքեպիսկոպոսին Կորնթոսի (Գառլին անուն, որ ի Կարգէն Քարոզողաց. այր ընտիր եւ խոհեմ եւ գիտուն եւ իրաւասէր եւ բարեբարոյ եւ ջատագով Մխարանութեան մերում) արար զուխտ իւր եւ զարձաւ ի վանս մեր. նոյնհետայն եւ մերքն ամենեքեան զխոստովանութիւն մեղաց արարեալ եւ զսուրբ Հաղորդութիւնն ընկալեալ արարին զուխտս առաջի Մխիթարայ Աբրահօրն ի վերայ նոր ընկալեալ կանոնի եւ սահմանադրութեան. եւ ապա Մխիթար Բարունին, որ զլուխն էր Կարգիս մերոյ, Աբրահօրն անուանեցաւ. քանզի յառաջ՝ Հայր վեհագոյն կոչելու եւ երբեմն՝ Վերահայր անուանեցաւ. քանզի յառաջ՝ Հայր վեհագոյն եւ ցնծութիւն մեծ յաղագս այսպիսի տեսուչ: Եւ եղև մեզ ուրախութիւն եւ ցնծութիւն Աստուած միջնորդութեամբ ամէնիւրհնեալ Աստուածածին Կուսին եւ սրբոյ Հօրն մերոյ Անտոնիոսի ի փառս իւր եւ ի յօղուտ՝ ոչ միայն անձանց մերոց, այլ եւ ընդհանուր ազգիս մերոյ ի ձեռն չորրորդ ուխտին, զոր Աբրահայրն մեր ի կառուցանելն իւրում զՄխարանութիւնն, յաւել ի վերայ երկից ուխտից Կրօնին: Ապա վաղվազակի գիրն ընդունելութեան մերոյ հաւանութեան կրօնի եւ կարգի, զոր արար Կղեմէս ԺԱ., գրեցաւ յԱբրահօրէն մերմէ եւ ի Մխարանութենէ մեծաւ շնորհակալութեամբ եւ նշանակաւ խնդութեանս մերոյ մեծի եւ առաքեցաւ առ նա:

Յետ կատարելոյ ամենայն իրաց հանդիսին, զոր պատմեցաք, ընտրեաց Աբրահայրն մեր զսուրբ Թովմաս զհրեշտակային վարդապետն լինել մեզ հեղինակ եւ առաջնորդ շաղագն ուսման: Որպէս եւ ի սկզբանէ ըստ շաղի իմաստասիրութեան սոյն այսորիկ սրբոյ վարդապետին վարժեաց զաշակերտեալսն ի փիլիսոփայական մակացութեան. իբր զի նորին վարդապետութիւնն իցէ դասն ուսման Մխարանութեան մերոյ: Վասն որոյ ամփոփեաց զանձն ի յարտաքին զբաղանաց զաւուրս ինչ եւ նորոգ ներկուս կրթութեամբ յաւել զհամութիւնն լատինական բարբառոյն. եւ ապա հրաման ետ Հ. Յովհաննէս վարդապետին սկիզբն առնել թարգմանութեան Առաջին մասին Աստուածաբանութեան սրբոյն Թովմայի: Եւ որչափ ինչ թարգմանէր նա, նոյն ինքն արանութեան սրբոյն Թովմայի: Եւ սրբայրն սրբագրէր. եւ զբանսն ի մեր բարբառ ըստ պատշաճին կարգեալ ի լոյս անէր. եւ ցուցանելով նմա զհանդարտութեան թարգմանութեանն ընթացից քաջալերէր զնա ի գործս յայս մեծ եւ ծանր: Եւ յետ վճարելոյ բազում խնդրոց նորա թարգմանութեան սորա զում օրինակս յեղլոյ, ապա սկիզբն առնէր զդասն վարդապետութեան սորա աշակերտաց իւրոց սեղանաւորել: Եւ արար այսպէս մինչև եզերեցաւ բոլոր թարգմանութիւնն ի յամս ինչ: Եւ զորս առ այս դաս կարգեաց, սոքա էին. Եղբայր Գարբիէլն, Միքայէլն, Փիլիպպոսն, Ստեփանն, Մատթէոսն. զի քան զայլսն մանկապոյն զտան սոքա: Իսկ զայլսն կարճ ի կարճոյ ճանապարհաւ առաջնորդեալ ի կատարումն ուսման էա՞ծ: Եւ խնամօք Տեսն յաջողեցաւ ուսումն հոգեբուղիս վարդապետութեան սրբոյն Թովմայի ի Մխարանութեան մերում մինչև ցայսօր ժամանակի:

Եղբայր Զաքարիան ուխտեաց եւ կոչեցաւ Յովհաննէս:

և հաստատեաց զսա առնուլ մեզ ի բնակութիւն մշնանջնական, եթէ գե-
րամբարձ հրապիրական թագաւորութեան տացէ մեզ հրաման զսա առնուլ ի
մշնանջնական ստացուած, իբր թէ ո՛չ միայն մեզ, այլ և յաջորդաց մերոց:
Եւ յայնմ հետէ մինչև ի վախճան առաջիկայ ամին աշխատ եղև վասն իբիս
այսորիկ յերթեկութեան ի դրունս մեծամեծաց և յարքունի ապարանն,
այլ ոչ կարաց զործքն վճարել:

1717. 18. Արբաճայրն աշխատէր նոյնպէս վասն մենաստանին, որպէս
և ի նախընթաց ամին: Եւ մինչ սպասէր ի կատարումն խնդրուածոց, և հաս
ի Կոստանդնուպոլսոյ լուր դուժի խոսովութեան ընդդէմ մերոցն յարուցելոյ.
Եւ էր խոսովութիւնն ի Մինասոյ. աե՛ս ի ժամանակագրութեան մերում,
մասն Բ. ի թիւն 2:

Շարադրեաց գերզն. «Ձքեզ սուրբ Հայր Անտոնիէ»:

Եւ և հաս գիր ի սուրբ ժողովոյն յետ կոչել զՀ. Գէորգն, և զայլ ոք
ոչ առաքել ի քարոզութիւն, մինչև դատաստանաւ տեսցին իրաւունք նորա:
Եւ զի Արբաճայրն մեր ընդ աւուրսն ի կարևոր գործս մենարանին ստա-
նայոյ պաղեալ էր, ոչ կարաց զնայ յայնժամ ի Հոովմ:

Ի փետրուարի եկն և հաս Հ. Յովսէփն, զկնի նորա Հ. Գէորգ վարդա-
պետն:

Ի սեպտեմբերի ել վճիռն ի վերայ հայցուածոց մերոց ի վեհափառ Մե-
րակուաէն և սուա մեզ հրովարտակ կարող լինելոյ ստանալ մեզ ի մենաս-
տան՝ գործոյն Ղազարու կղզին: (Եւ ի յետս պահանջէն նոցա զայս ի մէնջ,
պարտին տալ 10.000 մարշիլ):

ՄՈՒՏՆ Ի Ս. ՂԱՅԱՐ

Ի սեպտեմբերի 8, յաւուր չորեքշաբթի, ի քահանայապետութեան
Տեառն Կղեմայ ԺԱ. ի...⁵⁶ մտաք ի ժառանգութիւն կղզոյ սրբոյն Ղազա-
րու՝ անուամբ մենարանի: Եւ կարի խկ քաջ^{56a} գիտեցաւ օրն ի խնամոցն
Աստուծոյ ի յովն սեպտեմբերի, յորում շնորհագարդ ծնունդ Կուսին Մա-
րիամու տօնախմբի: Վասն զի յորում աւուր կատուցաւ Միարանութիւն մեր
ընդ խնամարկութեամբ ամենօրհնեալ Աստուածածին Կուսին և ընկալաւ զմա-
կազիր որդեգրութեան Սրբոյ Կուսին, ի նմին աւուր շնորհեցաւ մեզ ի Տեառնէ
միջնորդութեամբ նորա այսպիսի մշտնջենաւոր անբոյթ տեղի մենարանի:
Եւ լցաւ բանն առ ի նմանէ ասացեալ Արբաճօր մերում, թէ արարելոց զոր հայ-
ցեցեր: Եւ վասն այսորիկ երբակի եղև մեզ տօնախմբելի շնորհագարդ
Ծնունդն:

Չտանիս սենեկաց նորոգեաց Արբաճայրն մեր և ապա եղև մեզ բնա-
կութիւն, ոչ ամենեցուն, այլ ոմանց. զի բազումք ի մերոց զեռ ևս ի վար-
ձեալ տան մերում ի վէնէտիկ բնակէին, որպէս գառաջինն:

Ի նոյն.⁵⁷ ձեռն կարկ գերիս մեծամեծ սենեակս վերնայարկին:

Ի ամին ամի արար գիրթութիւնն աղօթից, և ի գալ ամին տալազրեաց.
զոր շարադրեաց ամենեւին ըստ ոճոյ նորոցն ի կարկել զբերանս նոցա, որք
բաջողէին անղազար գնախնեաց մերոց և զմէնջ, թէ ոչ գիտեն զքերակա-

⁵⁶ Այս տեղ A դատարկ բողոցած է 2½ տող. B ունի բազմակէտ:
^{56a} B պատշաճ:
⁵⁷ A այսպէս. կարդա՛ ի նոյնմբերի. դուրս ձգած է բազմակէտով ամբողջ տողը:

նութիւն, զոր օրինակ երբեմն ոմն ի նորոցն ընթերցեալ զԱստուածաշունչն
մեր սակաւ ինչ, և խփեալ զայն եղ ի մի կողմն ասելով. «Նախնիք մեր ոչ
զիտէին զքերականութիւն».⁵⁸ ապա բուռն և հար ընթեռնուլ զխփական շարա-
դրեալսն ի նորոց: Վասն որոյ ընթերցեալ նոցա զայս Կրթութիւնն աղօթից
ասեն. Այժմ ծանեաք թէ Միթիթարեանքն գիտեն զքերականութիւն: Եւ յայնմ
հետէ կասեցան բաջողանք նոցա: Ահա այսչափ բաներթուի էին և մանկա-
խելք, որք ոչ գիտէին որչեւ զՀարն (նորոցն) ի բարւոյն նախնեացն:

Այլ իբրև ամք վեց անցին ի վերայ, ձեռն կարկ զնոր մենաստան կա-
ուցանել ի նմին կղզու՝ զԱրտիլին ի հիմանց:

1718. 19. Ի վերջին աւուրս...⁵⁸ եղև կատարումն շինուածոց, և որք
ի ասն ի վէնէտիկ էին, եկին և նոքա ի վասն:

Ի հասանել մայիսի, գնաց ի Հոովմ Արբաճայրն մեր՝ թողեալ իւր փո-
խան տեսուչ զՀ. Եղիա վարդապետն:

Ի յունիսի և հաս ի Հոովմ: Եւ էր յայնժամ ծայրագոյն Քահանայապետ
վերայգրեալ Տէր Կղեմէս ԺԱ.: Եւ գառաջինն յիջեալսն եկեղեցւոյն Հայոց
բնակեցաւ: Եւ յետ աւուրց ինչ՝ զպատշաճ տեղի խնդրեալ ի մենարանի սրբոյն
Պանդալէտի վիային օթեվանս կալաւ: Յատաջնում նուազի զերապոյժաւ
զեսպանն վեհեղոյ ի Տիեռտոս անուն տոճմէ, առեալ գնա ընդ իւր, եմոյժ առ
սրբազան Պապն: Չկնի քսան աւուրց եմուտ առ սրբազան Պապն ընդ գերա-
պատիւ Սակրիպանտ Կարդինարին՝ խնամակալի աղղին մերոյ և կարգի, և
յայտնեաց զվախճանն երթալոյ իւրոյ ի Հոովմ:

Արար ի Հոովմ զԳրքոյի մի ի ջատագովութիւն ընդդէմ զբարտութեանց
մերոց ի Կոստանդնուպոլսոյ և ի մերապնեաց եղելոցն յայնժամ ի Հոովմ,
զոր շարադրեաց նախ հայերէն և ապա ընդ Հ. Յովհաննէս վարդապետին
մերոյ յիտալական բարբառ յեղեաց, և մատոյց ճարտասանի միում ըստ
ստեղծարանութեան պատշաճի շարադրել: Յաւուրն յայնոսիկ Պապն յեկե-
ղեցոջ Հայոց խօսեցաւ ընդ երկար ընդ Արբաճօրն: Ապա տալազրեալ զայն
զբքոյին բաշխեաց Կարդինարացն, և մատոյց զմին ևս Պապին մտեալ առ
նա յայնմ երբորդ նուազի առանց միջնորդի: Եւ անդ գտաւ Կարդինար Բա-
լուջն, որ էր առաջին պաշտօնեաց սրբազան Հայրապետին:

Ի սեպտեմբերի գումարեցաւ ժողովն վասն այնորիկ. և զկնի չորից ժա-
մուց վճարեցաւ ժողովն. յաղթող գտեալ Արբաճօրն: Եւ ի վաղիւն եմուտ
առ Պապն և շնորհակալ եղև. այս եղև չորրորդ նուազն յանդիման լինելոյ
սրբազան Հայրապետին: Առաջադրեաց Կարդինարացն զքննութիւն մերոցն
առաջի նուիրակի Պապին: Ապա Կարդինար Դանարայն, որ խնամարկու էր
երականութեան մերում, զոր պատմեցաք, կարկ առաջի Արբաճօրն զինդիւրն
վասն գնալոյ ուղղափառաց յեկեղեցիս Հայոց: Եւ արար ի վերայ խնդրոյն
այնորիկ զԳրքոյի մի և մատոյց սրբոյ ժողովոյն: Դարձեալ մատոյց զգիրքն
Մժրնայ Հայրապետին սրբազան Պապին մտեալ առ նա այս հինգերորդ ան-
գամ: Իբրև կամէր ելանել ի Հոովմայ՝ եմուտ առ սրբազան Պապն (այս
վեցերորդ անգամ) և շնորհեաց նմա Պապն զ1000 ներդրութիւն տալ տա-
քելեաց իւրոյ՝ յառաքել իւրում գնոսա ի քարոզութիւն. ևս և զայլ ինչ և
ապա զօրհնութիւնն:

⁵⁸ A ունի հոս 8 տասի դատարկ. B չունի ի վերջին աւուրս:

Ի դեկտեմբերի 6 էլ ի Հոռովմայ եւ ի դեկտեմբերի 20 եհաս ի Վէնէտիկ ի վանս:

1719. 20. ի փետրուարի 1. էառ զվճիռն ի Հոռովմայ վասն երթալոյ ուղղափառացն յեկեղեցիս Հայոց:

Առաջարկեաց առաջի նուիրակի Պապին զչորս անձինս եւ յետ յաղթող դտանելոյ նոցա՝ դարձեալ ինքնին քննեաց զնոսա եւ ապա ետ զծայրագոյն դաւազան վարդապետութեան, եւ էին սոքա. այսինքն Հ. Պողոս, Հ. Թովմաս, Հ. Գարբրիէլ, Հ. Փիլիպպոս: Կրեաց Արքահայրն զնեղութիւն ի Հ. Գէորգէն, եւ սակաւ ինչ եւս ի Հ. Յովսէփէն:

ՉՊարտէզն հոգեւոր եւ զՍոկուճն ետ տպագրել եւ եզ զայս թէութիւն (տե՛ս ի Ժամանակագրութեան, յամին Միարանութեանս 20 ի թիւն 15, վ.):

1720. 21. Հանաւ յաթոռոյն Կալան անուանեալ Վիկարն որ ի Կոստանդնուպոլիս եւ փոխանակ նորա այլ ոմն եղաւ:

Եկն եղբայր Մարկոսն աշխատաւոր ի գերութենէ:

1721. 22. ի մայիսի սկիզբն եղեւ նորոգութեան եկեղեցւոյն սրբոյն Ղազարու, քանզի...⁵⁹ եւ յաւել զչորս խորանս, եւ զՍրբոյն Յովսէփայ:

Չերկուս մանսինս ընկալաւ:

Ի փետրուարի եկն զԻր ի սուրբ Ժողովոյն առ Արքահայրն մեր վասն Հայոց եկեղեցւոյն հերձուածողաց եւ ուղղափառաց գնալոյ:

ՉԳիրս Առաքինութեանց ետ տպագրել:

Արտաքսեցաւ Հ. Յովսէփն:

1722. 23. ի սեպտեմբերի 30. ուխտեաց Թէոդորոս պատանին. սա եղեւ առաջին ի նորամտիցն Կրօնիս մերոյ զկնի ընդունելոյ մեզ վանս սրբոյն Ղազարու ի Վեհէշ քաղաքի: Յայսմ ամի սկիզբն արար Արքահայրն մեր լատինական լարբառոյն՝ ուսուցանել զկնի քերականութեան եւ ճարտասանութեան. եւ ուսոյց նախ Հ. Թէոդորոսին եւ ետ նմա թարգմանել զԿովտոնոյ առաջին հին փիլիսոփայութիւնն: Յառաջ քան զամս զայսոսիկ զՓիլիսոփայական մացուցութիւնս զպարզ յիւրմէ արարեալս ուսուցանէր առաջնոցն, եւ նոյնհետայն զսրբոյն Թովմայի Ազուինացւոյն զԱստուածարանութիւնն: Այլ առ սովաւ սկիզբն եղեւ՝ յայնմհետէ զնոսա, որ յետ ամաց ինչ աշակերտեցան՝ զկնի Քերթողութեան եւ Հոետորութեան ուսմանն բովանդակելոյ յուսումն լատինական բարբառոյն կարգել եւ ապա ի փիլիսոփայական հրահանգան:

1723. 24. ետ զծայրագոյն դաւազան վարդապետութեան չորից, ըստ ամենայնի որպէս եւ վերոյգրեալ չորիցն. եւ սոքա. Հ. Միքայէլ, Հ. Յակոբ Բուզայեան, Հ. Ստեփան եւ Հ. Մատթէոս: Բայց ի քննութիւն առաջի նուիրակի Պապին էր ընդ նոսա եւ Հ. Եղիա վարդապետն:

Հաստատեաց Արքահայրն յայսմհետէ զմանկունս ընդունել ի մենաստան: Արար օրինակ շինութեան մենաստանին միոյ կողման:

Յիսուն մարչիլ ետ ի ծախ թարգմանութեան Ռոտրիկիլեցին ի Պետրոս վարդապետէ Մցիսիթացւոյ:

1724. 25. Հիմն արկաւ նոր վանից մերոց շինուածոյն՝ հիւսիսակողման մասին ի կղզւոյ սրբոյն Ղազարու ի Վէնէտիկ:

1725. 26. ի սուրբ տարւոյ յայսմիկ առաքեաց ի Հոռովմ փոխանակ իւր զհինգ անձինս. տե՛ս ի Ժամանակագրութեան, թիւ 1:

⁵⁹ A կէս տողէն աւելի դատարկ ունի հոս: B գուրս ձգած է քանզի:

Ի սեպտեմբերի 24 եկն եհաս ի վանս մեր Հ. Թովմասն հինգ մանկամբք. եւ զգեցոյց Արքայն մանկանց զսեւ զգեստ ուսանողի (որոց առաջինն կոչիւր Յարութիւն, որ եղեւ Հ. Իգնատիոս): Եւ սկիզբն արար ի վերայ մանկանցն եկելոց ի ներքոյ ձեռին իւրոյ զերկուս դաստիարակ կացուցանել. զմին վարժապետ, որ եղեւ Հ. Ստեփանն, եւ զմին դասատու, որ եղեւ Հ. Մատթէոսն. թէպէտ ինքն էր խրատատուն եւ դասատու: Արար լԳ Կառնոս վասն մանկանց, ըստ որում յայսմ ամի գրի ի Ժամանակագրութեան, թիւ 6:

Ամրատանեցաւ Արքահայրն ի Հոռովմ վասն կնոջ առն միոյ. բայց ջատաղովեցաւ:

Յայսմ սեպտեմբերի եղեւ ընակութիւն ի նորոգ շինեալ մասին: Արար Արքահայրն զՔրիստոնէական վարդապետութիւն եւ ետ տպագրել:

1726. 27. ի մարտի. Հիմն արկաւ նորընծայարանին, յորում եղեւ դասատուն եւ մատուռ, եւ ի հոկտեմբերի աւարտեցաւ: Արար զԱշխարհարան Քերականութիւնն եւ ընդ նմին Հաղարացւոց բարբառոյ՝ յայագս Գաղատացւոց եւ ետ տպագրել:

1727. 28. ի յունիսի 3 սկիզբն եղեւ պատանեացն զսուրբ սքեմն Կրօնիս մերոյ առնուլ, յորոց յառաջընթաց եղեւ Յարութիւնն, որ կոչեցաւ Իգնատիոս:

Ի հասանել աշնան Ժամանակի ի նոյեմբերի 1 սկիզբն եղեւ նորընծայից յանքոյթ՝ յաներկեւան տեղւոյ անշփոթ, անասան, անգրաղ մնալ: Վասն որոյ եւ մեք ստորեւ ի սոցանէ սկիզբն առնեմք կարգել դաս դաս զմերսն, համարելով զառաջինսն հիմունս Կրօնիս մերոյ, որպէս ստորեւ գրեսցուք եթէ Տէր կամեսցի:

Սկսաւ շինել զԲառղիթքն եւ եհաս ի բառն «Երախայրի» եւ արգելաւ զամս իրրեւ հնգետասան:

1729. 30. Արքայն ետ բերել զպղնձի զաղափարս տպագրական տառից ի Սմսդրտամու⁶⁰:

1730. 31. ի սեպտեմբերի 15 ոմանք գրեն թէ այսօր ետ Արքահայրն Կառնոն նորընծայից:

1731. 32. ի մայիսի. յամէ առտի սկիզբն արար Արքահայրն յամին միանգամ զնորընծայսն տանել ի դեղ ուրեմն⁶¹ ի համեստ գրօսանս:

1732. 33. ի մարտի 26. Հիմն արկաւ վարժարանին, ի սեպտեմբերի 30 կատարեցաւ եօթն սենեկօք:

1733. 34. ի յունիսի 18. ետ տպագրել զԱստուածաշունչն բազում երկամբք եւ կատարեցաւ 1735, ի նոյեմբերի:

Ի յունիսի հանեալ ի նորընծայարանէն զգարգացեալսն եզ ի վարժարանին: Ոմանք գրեն թէ յայսմ ամի ի յունիսի 26 գրեաց Արքահայրն զԼԳ. Կառնոն նորընծայիցն: Իսկ ոմանք թէ արար Արքայն զառանձնական կանոնս վարուց նորընծայից եւ առհասարակ ամենայն պատանեաց. եւ կանոնքն զքստասուն եւ հինգ բանս պարունակեն:

⁶⁰ A ի յամս յամսու:
⁶¹ A ումեմն:

1735. 36. Ի յուլիսի 6 Արրահայրն զերկաթի խայթոցալի դօտիս շլթայա-
գործս եւ Նորընծայիցն եւ Ուխտելոցն ամել ընդ մէջ յիւրաքանչիւր Եօթնեկի
յաւուրս երկուս Ի չորեքշաբաթու եւ յուրբաթու. զի թէ զայժեայ ասուեղէն
ներքնաշապիկն ումեք ոչ մարթասցի զգեհուլ, զէթ զայս փոխանակ նորա
կալցի:

1736. 37. Կամեցաւ Արրայն եւ զմի այլ մենաստան կառուցանել Ի Պա-
տաւիա⁶² կամ յայլ մերձակայ քաղաք կամօք Տեառն, բայց ոչ յաջողեցաւ Ի
Տեառնէ: Վասն որոյ ընտրեաց ձեռն արկանել Ի շինութիւն մնացեալ մասին
մենարանին սրբոյն Ղազարու:

1737. 38. յապրիլի 10. Եւ զբոշել զպողոպատիկ նշանագիծս տառից Ի
տաղադրութիւն:

Հ. Թէոդորոսին եւ զփոքր գաւազան, (որ է այս. նախ՝ զի որ տայ, հա-
մառօտիւ ասէ զբանն Ի տալն զիշխանութիւնն: Երկրորդ զի որ տանու զփոքր
գաւազան, ոչ կարէ սյլում տալ զգաւազան վարդապետական իշխանութեան:
Երրորդ ոչ կարէ նստելով քարոզել յեկեղեցւոջ: Զորրորդ ոչ կարէ գաւազա-
նաւ քարոզել):

Ի սեպտ. 15 նկարեցաւ կենդանագիր պատկեր նորա:
Բենեդիկտոս ԺԳ., յորմէ ընկալաւ զգիր օրհնութեան ամենայն միարանիցս,

1738. 39. Ի մարտի 7. Արկաւ հիմն մնացեալ մասին շինուածոյն մենա-
րանին սրբոյն Ղազարու:

Ի սեպտեմբերի 6. արտաքսեցաւ Եղ. Յովհաննէսն Թումաճոյեան:

1739. 40. Ի մայիսի 19. Ի տօնի Հոգեգալստեան. Սկիզբն արար մեկնե-
լոյ գրիւս Իմաստութեան Սողոմոնի. ինքն ասէր եւ այլ ոք զբէր, բայց յա-
ւարտ ոչ եհաս:

Ի հոկտեմբերի 7. Եղև սկիզբն մեծի հիւանդութեան նորա. եւ յայնմ-
հետէ տկարացաւ յառաջին ուժոյ իւրմէ:

1740. 41. Ի հոկտեմբերի եղև կառարումն մենարանին Ի Վեհեշ, Ի կղզին
սրբոյն Ղազարու: Եղ փականս զբաց մենաստանին:

Ի նոյեմբերի 12. Թաղեաց զՀ. Միքայէյն Կոստանդնուպոլսեցի, որ եղև
առաջինն աշակերտաց նորա, զոր ներկայութեամբ իւրով թաղեաց եւ եղ Ի
կոյս գերեզմանի:

Հաստատեաց զկարգ Երրորդաւոր անուանեալ Եղբարց:

1742. 43. Առաքեաց զմի Աստուածաշունչ, զտաղաքեալն յիւրմէ, առ
Բենեդիկտոս ԺԳ., յորմէ ընկալաւ զգիր օրհնութեան ամենայն միարանիցս,
որ զրեցաւ Ի Հոռոմ առ աւագ սուրբ Մարիամ Աստուածածնին, Ի սեպտեմ-
բերի ԻԲ., 1742, յերրորդ ամի քահանայապետութեան նորա:

1743. 44. Ի մայիսի. Հերոնիմոս Բոնա Վիկարն, այսինքն փոխանորդն
Կոստանդնուպոլսոյ Պատրիարքին, եկն բնակեցաւ Ի վանս մեր յորդորմամբ
Պատրիարքին Վէնէտիկոյ եւ գնաց...⁶³:

ՅՕդոստոսի եղև սրբազան Պապ եւ անուանեցաւ Կղեմէս ԺԳ. Վէնէտի-
կեցի Կարգինար Կառուրս անուն Հոնծոնիկեան, Կրօնիս մերոյ բարեկամ, որ
նորոգ եկեալ էր Ի Վէնէտիկ. եւ էր ընտրեալ յեպիսկոպոս Պատաւիոյ. եկն

⁶² A Ի Պատաւիա:
⁶³ A 2 տող զատարի:

Ի վանս մեր Ի տեսութիւն իբր ժամս երկուս. բայց զերապոյճաւ Մխիթար
Արրայն մեր յայնժամ ոչ գտաւ Ի վանս:

1744. 45. Ի մայիսի 26. Եւ տաղաքել զգրարաւ Բառգիրքն Հայկազեան
Լեզուի, զոր յամին 1727 մինչև Ի բառն Երեխայրի մեկնեալ:

1745. 46. Եւ գաւազան միում...⁶⁴: Յայտ ամի սկիզբն եղև քանդա-
կազործութեան սղոնձոյ Ի Հ. Զաքարիայէն եւ Ի Հ. Իգնատիոսէն:

Եւ զձայրազոյն գաւազան մեռասանից:
1746. 47. Ի մայիսի. Ի զժուարակերձ վաանգէ զալկան ըմբոնեցաւ եւ
տեւեաց մինչև ցմահ նորա:

1747. 48. Ի մարտի. Շինեաց Ի մարմարոնեայ գոյնգոյն քարանց գաւազ
խորանն սրբոյն Ղազարու:

1748. 49. ...⁶⁵ Եհաս Ի Կրօնէ զՀ. Թէոդորոսն:
Ի սեպտեմբերի օրհնեաց զհիմն կանդակատան եւ յառաջացոյց զշինուածն
մինչև Ի վեանով չափ բարձրութիւն եւ զաղաքեցոյց զշինելն յամիս ինչ Ի
յաղուս հաստատութիւն նորա:

1749. 50. ...⁶⁵ Ընծայեցաւ կտակաւ տունն Պաշտպալցի աղայ Պետրո-
սին Գօրօճեան Ի շինութիւն մենաստանի եւ եկեղեցոյ Կրօնիս մերոյ, եւ է
տունն Ի յեղիսարեթապոլիս⁶⁶ քաղաքի յանդիման մեծի հրապարակի այնր քա-
ղաքի:

Մխիթար մեծ Արրահայրն մեր արար զկտակն իւր եւ զխրատ առ միա-
րան Հարս Ուխտին, յայտնել զայն յետ մահու իւրոյ:

Ի յապրիլի 9. Ասէ. Մեծի ուրախութեան է ինձ օրս այս, քան զօր
ծննդեան իմոյ. եւ արդ պատրաստեցէք զինչ եւ պէտք են, եւ ընկալայց
գուրբ Օծումն վերջին: Եւ ընկալաւ ջերմն սիրով զուրբ խորհուրդն Խոռ-
տովանութեան եւ Հազորդութեան (եւ զվերջին Օծումն) եւ կոչեաց նախ
զձերան առանձին, յորս էին. Հ. Եղիա վարդապետն, Հ. Յովհաննէս վարդա-
պետն, Հ. Պօղոս վարդապետն, Հ. Պետրոս վարդապետն, Հ. Գրիգոր, Հ. Փի-
լիպոս, Հ. Ստեփան, Հ. Մատթէոս վարդապետն եւ Հ. Անտոն: Ապա նոյն-
հետոյն եւ զայլ միարանն եւ օրհնեաց զնոսա:

Յապրիլի 25. Դարձեալ խոստովանեցաւ եւ հազորդեցաւ:
Յապրիլի 26. Յերկոյին շարաթու ասէ. Ընդ երկկոյս հանդիցեն լալիք,
առաստուց եղիցի ուրախութիւն:

Յապրիլի 27. Ի խաղաղական պահուն իբրև այն ինչ մերձ էր յաւանդել
զմաքուր հոգին, առ խաղաղական աւանդումն նորա մատեաւ պատարագ, եւ
յաւարտիլ սրբոյ պատարագին քաղցր շնչամբ աւանդեաց զհոգին յաւուր
կիրակէի իբր յեօթներորդ ժամուն: Քանզի Ի գիշերի յեօթներորդ ժամուն
աւանդեաց զհոգին մերձ յարշալոյսն կիրակէին, որ էր 27 ապրիլի:

Աւանդումն հոգւոյ նորա եղև յամի Տեառն 1749, յամի Միարանու-
թեանս մերոյ 50ին, յապրիլի 27, յեօթանասուն եւ չորսերորդ ամի հասակի
Ի ԴԿ. այսինքն Ի չորրորդ կիրակէին Յիւնացն:

⁶⁴ A կէս տող զատարի:
⁶⁵ A Ամիսն ու օրը նշանակելու համար զատարի թողաւ:
⁶⁶ AB Հեղիսարեթապոլիս:

Թաղեցաւ յաւուր <Հինգշաբաթի> 67 յեկեղեցւոյ որ ի կղզին սրբոյն Ղազարու որ ի վէնէտիկ, յետկոյս աւագ խորանին:

Ապա յամի Տեառն 1750 Ստեփաննոս երկրորդ Կարգապետ Արքայ յաջորդ նորա շարժեալ զաւագ խորանն եւ զգերեզման նորա, եղաւ մարմին նորա ի բեմի առաջի աւագ խորանին, յորոյ գերեզմանի վերայ փորագրեցաւ ստանաւորս այս շարադրեալ ի Հ. Մկրտչէն Անանիայէնց եւ է այս:

Օրինակ ստանաւորին քանդակելոյ ի վերայ գերեզմանի Մխիթարայ մեծի Աբբայի Սեբաստացոյ 68:

ՔՆԱՐ ՔԵՐՈՒՔ ՀՈԳԵՏԱԻՒՂ	ՈՐՈՎ ՀԱՍՏԵԱՅ ԿԱՐԳ ՀՈՄԱՇՈՒՆՁ
ՆԵՐԿՈՒՌ ՄԱՏԻՆ ԱՍՏՈՒԱԾԱՃԻՂ	ԻՒԻՍԵԱԼ ՏԵՐԱՄԲ ԻԲՐ ՈՍԿԵՓՈՒՆՁ
ԱԶԳԵԱԼ ՍԵՔԱՍՏ ՄԱՐԶԷՆ ԽԱԻԻՂ	ԱԿՈՒՄԲ ԿԱՌՈՅՑ 70 ԴՊՐԱՅ 70 ՄՐՄՈՒՆՁ
ՐԱԿԵՐՏ ԱՐԲԱՅ ԼՈՒՍԱՇԱԻՒՂ	ԾԱՂԻԿ ՎԱՐՈՒՅ ՔԱՐՈԶ ԱՆՇՈՒՆՁ
ՔԱՏԱԿ ՄԱՐՄՆՈՅՆ ԿԱՅՏԱՌ ԻՌՈՂԻՂ	ԱՐՓԻՈՅՆ ՄԱՐԶԷ ՄՏԻՑՆ Ի ՔՈՒՆՁ
ԱՆՃԱՌ ԱՆՀԱՍ ԽՈՐՈՅ ԲԱԻՂ	ՅՂԿԵԱԼ ԴԱՐԱՍՏ ՏՆԿԵԱՅ Ի ՅՈՒՆՁ
ՂԱՄԲԱՐՔ ԾՆՈՐՀԱՅ ԳԵՐՇԱՌԱԻՒՂ	ԻՒՐԱՅՕՐԷՆ ՆԱԽ ՎԱՆՂՍ ԶՈՒՆՁ
ՅԱՅՏԻՁ ԼՈՒՍՈՅ ՇԸԼԱՅ ՇԱԻՂ	ՆԻԹԵԱՅ ՆԱՐՕՏ ԿԱՐԳԻՍ Ի ՓՈՒՆՁ
ՐԱԽՃԱՆ ԳԻՏՆՈՅ ԻՄԱՍՏ ԱՆՆԻՆՁ	ՀԱԳԱԳ ՀՈՎՈՒԻՍ ԱՆՏԻՑ ՅԸՐՕՆ
ԱԶԳՈՒ ՌԻՍԱԻ ԻՆՔԵՆ ԱՆՋԻՆՁ	ՈՆՈՐՏ ՀՆՁԷՐ ՄԵՂԿԻՑ ԿԸՐՕՆ
ԽՄԲԻՑ ՌԻՍՈՅՑ ԲԻՐՈՒՅ ԱՌԻՆՁ	ԳՈՒՀԱՐ ՄՏԱՅ ԽՈՆԱՐՀ ՍԻԳՆՕՆ
ՕՃԱՆ ՈԳԻՈՅ ՄԸՏԱՅ ՇԸՌԻՆՁ	ԻՒԻԾԵԱԼ ՈԳԻՈՅ ԳԵՐ ԼԻՔԱՆՕՆ
ՍՈՓԵՐՍ ԳՐԵԱՅ ՅԱԽՏԷ ՈԶԻՆՁ	ՈՂՈՔ ՅԱԽՏԻՆ ԳԱՂԹԷՐ ՊԱՇՏՕՆ
ԱՍՔԱՆԱԶԵԱՆ ՏՈՀՄԻՍ ՍԱՏՐԻՆՁ	ՅԱՍՊԻՍՆ ՀԱՅՈՅ ԱՐԺԱՆՆ Ի ՏՕՆ
ՍԱՅԹԱՔ ԶԱՐԻՆ ԳՈՌՈՅ ԿԸՌԻՆՁ	ՆՈՒԱԳ ՈՍԿԻ ԸՆԾԱՅ Ի ԶՕՆ
ՏԱՐԱԻ ԱՆԲԱԻ ԻԲՐԵԻ ԶԵՐԻՆՁ	

«Որոց սկզբնատառքն յօրինեն զայս բան. Բնար քաղցրախօս աստուածային հոգւոյն 71»:

* * *

67 A եօ... (4 զրի տեղ դատարկ):

68 Ազոնց (էջ 282) Ոտանաւորէս յառաջ ունի տողերս.
ՏԱՊԱՆ ՄԽԻԹԱՐԱՅ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻ
1749 ԱՊՐ. 27

Թորոսեան (էջ 333) կը նշանակէ պարզապէս Ոտանաւորին վերջը
«1749 ԱՊՐԻԼ 27»

69 Ազոնց եւ Թորոսեան կը կարդան կացոյց: Այսպէս AB եւ Անանեան:
70 AB զպրոց:
71 Ոտանաւորիս Մեկնութիւնը գրած է Հեղինակն ինքեմն Հ. Մ. Անանեան, տես էջ 363 եւ շար.:

Հոս կ'աւարտի A: Իսկ B օրինակը յաւելուածաբար ունի, հաւանօրէն քաղցրով ժամանակագրութեան, հետեւեալ ցանկը Մխիթարի աշակերտներուն, որ հետաքրքրական է:

ՅԱՆԵԼՈՒԱԾ

Աշակերտեաց զանձինս յիսուն եւ մի, որոց վերջինն է եղբայր Անանիայն Կոստանդնուպոլսեցի Առաքելեան, վերջինն չորրորդ դասուն ի նորընծայութենէ: Դարձեալ ետ ուխտել աշխատաւոր եղբարց ութից, որոց բովանդակն լինի յիսուն եւ ինն, իսկ ինքեամբ վաթսուն, թէպէտ ոմանք ի սոցանէ հատան:

Ի Յուլիսի 1700 սկսաւ ժողովել զաշակերտս, եւ եղև նոցա զլուխ մեծաւոր:

Ի սեպտեմբերի 1712 կոչեցաւ Աբրահայր:

Յապրիլի 27, 1749 վախճանեցաւ:

Արդ՝ ի յուլիսի ամսոյն 1700 թուոյն մինչև ի սկիզբն սեպտեմբերի ամսոյն 1712 թուոյն են ամբ 12 եւ ամիս 2: Իսկ ի սկզբանէ սեպտեմբեր ամսոյն 1712 թուոյն մինչև ցվերջն ապրիլի ամսոյն 1749 թուոյն են ամբ 36 եւ ամիս 8: ամսոյն մինչև ց1749, ցվերջն Ապրիլ ամսոյն: Իսկ այլազգ առեալ՝ այս է հաշիւն, այսինքն ի 1700 ամէն մինչև ց1749 են ամբ 50: Վասն որոյ եկաց մեծաւոր դամս 12 եւ զամիսս 2, իսկ Աբրայ՝ դամս 36 եւ զամիսս 8:

Ի վերջ ժամանակագրութեան զրի այսպէս: Լուսափայլ հոգի Մխիթար Աբրահայրն մեր, զորս ի կառուցումն միաբանութեան նորոգեալ կարգի Կրօնիս մերոյ՝ յաշակերտութիւն իւր ժողովեաց, եւ զորս յետ նորուն հաստատութեան ի նոյն յաւել, եղեն իբրեւ 54: Ոչ զնէ ի թիւս եւ ի դասակարգութիւնս նոցա զնոսա, որ թէպէտ կրօնաւորեցան, բայց ի հաւատոս սուրբ Ուխտին ոչ կացին, այլ կարգաթող եղեն եւ կամ ի սուրբ Կարգէն մերժեցան վասն անհնազանդութեան իւրեանց:

- 1. Հ. Եղիա վարդապետ
- 2. Հ. Յովհաննէս վարդապետ
- 3. Հ. Ղազար
- 4. Հ. Մանուէլ
- 5. Հ. Անդրէաս
- 6. Հ. Պօղոս վարդապետ
- 7. Հ. Պետրոս վարդապետ
- 8. Հ. Թովմաս վարդապետ
- 9. Հ. Գարբէլ վարդապետ
- 10. Հ. Միքայէլ վարդապետ
- 11. Հ. Յակոբ վարդապետ
- 12. Հ. Գրեղոր
- 13. Հ. Փիլիպպոս վարդապետ
- 14. Հ. Ստեփաննոս վարդապետ
- 15. Հ. Մատթէոս վարդապետ
- 16. Հ. Յօհան
- 17. Եղբայր Յովհաննէս
- 18. Եղբայր Ստեփան
- 19. Եղբայր Մարկոս
- 20. Եղբայր Մկրտիչ

Զայսուսիկ կրօնաւորեաց մինչդեռ Միաբանութիւն մեր լինէր ի Մեթոն Պեղողոսնտիայ ի յիւրմէ կառուցեալ վանս սրբոյն Անտոնի: Իսկ յետ փոխելոյ նորա ի վեհեջ՝ յաւելեալքն ի Միաբանութիւն մեր ի միւս յիւրմէ կառուցեալ վանս ի կղզւոյ սրբոյն Ղազարու, սոքա են յանուանէ, այսինքն՝

- 21. Հ. Յակոբ
- 22. Հ. Անտոն վարդապետ
- 23. Հ. Իգնատիոս վարդապետ
- 24. Հ. Սիմոն վարդապետ
- 25. Հ. Ջաքարիա վարդապետ
- 26. Հ. Գարրիէլ վարդապետ
- 27. Հ. Ղուկաս վարդապետ
- 28. Հ. Բարթոլոմէոս
- 29. Հ. Յովսէփ
- 30. Հ. Անդրէաս վարդապետ
- 31. Հ. Ստեփան վարդապետ
- 32. Հ. Մկրտիչ վարդապետ
- 33. Հ. Ղազար
- 34. Հ. Մարկոս վարդապետ
- 35. Հ. Միքայէլ
- 36. Հ. Գէորգ վարդապետ
- 37. Հ. Վրթանէս վարդապետ
- 38. Հ. Կարապետ վարդապետ
- 39. Հ. Յակոբոս
- 40. Հ. Բարսեղ
- 41. Հ. Ներսէս
- 42. Հ. Թադէոս
- 43. Հ. Սահակ
- 44. Հ. Գարրիէլ
- 45. Հ. Յովհաննէս
- 46. Հ. Անտոն
- 47. Եղբայր Միքայէլ
- 48. Եղբայր Դանիէլ
- 49. Եղբայր Մեսրոպ
- 50. Եղբայր Անանիա
- 51. Եղբայր Ստեփան
- 52. Եղբայր Գրիգոր
- 53. Եղբայր Պօղոս
- 54. Եղբայր Նիկողայոս

Ի Բառարանի յատուկ անուանց զնէ սյուղէս. Աշակերտեաց ի կարգ կրօնաւորութեան անձինս իրրեւ 58:

Ի յայրելի 30, 1749, 50, յետ երկց աւուրց վախճանելոյ Տեառն Մխիթարայ առաջնոյ Աբրահօր մերոյ, եղև փոխանորդ Աբրայի՝ Հ. Եղիա վարդապետն:

Ի մայրի սկսան շինուածն դանդակատան մինչև ցայն վայր բարձրութիւն կառուցանի դանդակաց տեղին եւ կախարան:

Յայրելի 6, 1750, 51, յերկուշարաթի Նոր Կիւրակէի, ընտրեցաւ Աբրահայր Հ. Ստեփաննոս վարդապետ Կոստանդնուպոլսեցի Մելքոնեան:

**ՄԽԻԹԱՐ ԱՐԲԱՅԻ
ՏԱՊԱՆԱԳՐԻՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ
Հ. ՄԿՐՏԻՉ Վ. ԱՆԱՆԵԱՆԷ**

Ա. Զ. Գ.

Մխիթար Աբբասի «Համառոտութիւն վարուց» գործին մէջ (հմմտ. աստ էջ 360) կը յիշատակուի, թէ անոր գամբանին վրայ փորագրուած ոտանար տապանագիրը յօրինած է Հ. Մկրտիչ Անանիայէնց 1750ին: Այս գամբանագիրը յառաջ բերած են Գեր. Ագոնց եւ Հ. Թորոսեան, առանց յիշելու հեղինակին անունը: Այդ ոտանար ներքողը գրուած է խորհրդանշանով, եւ կը մնայ գրեթէ բոլոր ընթերցողներու համար, ինչպէս կը կարծենք, անիմաստալի: Թէ արդեօք ձեռնարկուած է երբեք լուծելու այդ «Բնար բերութ»ը, յիշատակութիւն մը չունին այդ մասին իր կենսագիրները: Այս պատճառով մեծագոյն անակնկալն էր ինձ համար, երբ Մեծ. Հ. Ն. Վ. Ակիմեան իմ ուշադրութիւնն հրաւիրեց այս գրութեան վրայ, որ պահուած է վիեննայի Մխիթարեան Մատենադարանի Թ. 610 Ձեռագրին մէջ, գրուած Կ. Պոլիս Գրիգոր գրչէ 1787 օգոստոս—1788 սեպտեմբեր տարւոյն մէջ¹: Ձեռագիրս Քղ. 51ա—55բ կը պարունակէ այս Տապանագիրն եւ անոր Մեկնութիւնը: Գրութեան վերջը հեղինակին մասին գրուած է. «Մեկնեալ ի նորին աշակերտէ ի Մկրտիչ վարդապետէ»: Այս Մկրտիչ վարդապետը, որ Մխիթարի աշակերտն էր, միայն Հ. Մկրտիչ Անանիայէնցը կարող է ըլլալ, որ մեր Մխիթարեանց Հարց ցանկին մէջ անուանուած է Հ. Մ. (Բուզայեան) Անանեան, ծնած Կ. Պոլիս 1715, քահանայ ձեռնադրուած 1739ին եւ վախճանած 6 սեպտեմբեր 1777ին Թեսաղոնիկէ: Կ'ըսուի թէ սա «Գլխաւոր գործակիցն» էր Կ. Պոլիսի Հայկազեան լեզուի Բաղրէին Ա. եւ Բ. հաստրներուն²: Մեկնութեան պարզ ընթերցումովն իսկ կարելի է գուշակել, թէ Տապանագրին յօրինողն ու մեկնիչը միեւնոյն անձն է: Այստեղ Հ. Մկրտիչ ոչ միայն խորհրդանշան ոտանարիս խորհրդանշանը կը մեկնէ, այլ նաեւ գեղեցիկ կերպով

¹ Ձեռագրիս նկարագրութիւնը տուած է Հ. Յ. Տաշեան, Մատենագրական մանր Ռուս. նախորդութիւններ, Բ., վիեննա 1901, էջ 156—158:
² Հ. Գ. Չարիանիւեան, Հայկական Մատենագիտութիւն, վիեննայի 1883, էջ 87: Ասկէ՝ Հ. Ա. Ղազիկեան, Հայկական Նոր Մատենագիտութիւն, վիեննայի 1909—1912, էջ 309—310: